Մրցութային առաջարկի բացատրագիր

# ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՍԱԿԱՐԳԻ ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթի պատվիրատու; ՀՀ քաղաշինության կոմիտե

Երևան
1.1.2024

## Оглавление

Նախաբան ........................................................................................................ 2

Թեմայի արդիականություն ........................................................................................ 2

Մրցույթի նպատակը ըստ տեխնիկական առաջադրանքի ........................................................ 2

Մրցույթի տարածքի սահմանները ................................................................................... 2

Մրցույթի առարկա ................................................................................................... 3

Հայեցակարգային նախագծի տեխնիկական առաջադրանքը ...................................................... 3

Հայեցակարգի նախապատրաստման սկզբունքները ................................................................ 3

I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱԿԱՆ ...................................................... 6

II. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ................................................................................................ 10

Երևանի հիմնական շրջանները ..................................................................................... 11

Երևանի 1937 թվականի գլխավոր հատակագծի հատակագծային առանձնահատկությունները: ............................................................................................. 16

1960-1989 թթ. Երևանի կազմավորման շրջանա-միկրոշրջանային և ազատ կառուցապատումը: ........................................................................................................ 16

III. Կոնդի Թաղամաս .................................................................................................. 19

Կոնդ թաղամասի անհայտ ապագան ............................................................................... 23

IV.ՌԵԳԵՆԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ............................................. 25

V. ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ...................................................................................... 28

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻԱԳՐԱՄ (ԱՌԱՋԱՐԿ) ........................................................... 28

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻ .............................. 32

# ՆԱԽԱԲԱՆ

**Թեմայի արդիականությունը:**

Հայաստանի Հանրապետությունում առկա են բազմաթիվ պատմականորեն ձևավորված կարևոր տարածքներ, որոնք մեզ են հասել իրենց սկզբնական տեսքով, բայց մինչ այժմ ոչ մի տեղ համալիր պատշաչ լուծում չեն ստացել դրանց ծավալատարածական միջավայրի կազմակերպման, վերարժևորման և ժամանակակից պահանջներին համապատասխան պատմամշակութային թաղամասերի ստեղծման հիմնախնդիրները:

Կոնդը Երևան քաղաքի պատմականորեն կազմավորված կենտրոնի տարածքում միակ պահպանված հին թաղամասն է, որը ձևավորվել է դեռևս 16-րդ դարում: Այն արմատական փոփոխություններ չի կրել ավելի քան մեկ դար և մի շարք պատմական նշանակություն ունեցող կարևոր շինություններ այստեղ դեռ պահպանվում են: Ուստի ճարտարապետական մրցույթի և մրցութային թեմայի պահանջների իրականուցումը ժամանակի թելադրանք է, որի հրատապությունը ակնհայտ է:

**Մրցույթի նպատակը ըստ տեխնիկական առաջադրանքի**

Առաջադրող տեխնիկական առաջադրանքում առաջադրվում է նպաստել՝

- պատմականորեն ձևավորված և ազգագրական-հնագիտական արժեք ունեցող համայնքի քաղաքաշինական կայուն զարգացման սկզբունքների ինտեգրմանը,
- տեղաբնակ ռեզիդենտների արտագաղթի կանխմանը, տեղական անշարժ գույքի արժեքի բարձրացմանը մինիմալ ներդրումներով և միջամտություններով,
- լոկալ տնտեսության և զբոսաշրջության ակտիվացմանը, ճարտարապետության, ենթակառուցվածքների և սպասարկման որակի բարձրացմանը և աշխատատեղերի ստեղծմանը՝ որպես գերակայություն դիտարկելով Կոնդի բնակչության շահերը:

Միջավայրի ռեգեներացիայի/վերականգնման մոդելի մրցույթի փուլի նպատակն է կանխորոշել ազդեցության այն մեթոդները, որոնք օպտիմալ են պատմական այս միջավայրի պահպանության և զարգացման համար, որոնց նպատակը ոչ թե ոչնչացնելն է, այլ ազդեցության մեթոդների ամրապնդումը, որոնց թվում ճարտարապետական որոշումներն ու գործողությունները հեռու են առաջին և հիմնականները լինելուց:

**Մրցույթի տարածքի սահմանները**

Երևան քաղաքի «Կոնդ» թաղամասի մրցույթով առաջադրվող տարածք՝ մոտ 16.0 հա մակերեսով (սահմանները տրված են էլակետային նյութեր բաժնում):

**Մրցույթի առարկան**

Քաղաքաշինական հայեցակարգի մշակում Երևան քաղաքի «Կոնդ» թաղամասի քաղաքաշինական միջավայրի ռեգեներացիայի/վերակազմավորման նպատակով:

**Հայեցակարգի տեխնիկական առաջադրանք**

Մրցութային հայեցակարգի ընդգրկման տարածքը Կոնդ թաղամասի ձևավորված պատմական քաղաքաշինական բանվածքն է, որը նախատեսված է՝

- առավել հիմնավորված ռեգեներացիայի-վերակենդանացման հայեցակարգերի առաջադրման,

- տարածքի ինքնության պահպանման,
- հնի-նորի շարունականակության ապահովման և միևնույն ժամանակ բնակչության համար առավել հարմարավետ և հասանելի/անարգել միջավայրի կազմավորման նպատակով:

**Հայեցակարգի նախապատրաստման սկզբունքները**

Տարբերականություն և բազմազանություն, զգայական ռեզոնանս տարածքի պատմականորեն ձևավորված միջավայրի և բնական լանդշաֆտների հետ:

Մրցութային հայեցակարգի առաջարկները պետք է հաշվի առնեն թաղամասի մշակութային լանդշաֆտի առանձնահատկությունները, ձևավորեն բնական լանդշաֆտների և ձևավորված քաղաքաշինական-ճարտարապետական միջավայրի հետ տեսողական ամբողջականություն:

Հայեցակարգային լուծումները պետք է հաշվի առնեն ձևավորված ճարտարապետական միջավայրի արտաքին կերպարի այնպիսի ձևավորում, որի պարագայում կձևավորվի փողոցային ճակատային համայնապատկերների բազմազանություն՝ ապահովելով միասնական լուծումների միջոցով միջավայրի շարունակականություն և միմյանց նկատմամբ առավել ներդաշնակ լուծումներ:

Հաշվի առնելով հայեցակարգի իրագործման ծախսատարությունը՝ վերջինիս սոցիալական բաղադրիչի առկայությամբ պայմանավորված, դիտարկել Կոնդի քաղաքացուն որպես գերակա շահ և մրցութային հայեցակարգում ներկայացնել նաև ծրագրի իրագործելիության հիմնավորում:

**Մրցույթի նախապատրաստմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ**

Մրցութային առաջարկները պետք է համապատասխան են Տեխնիկական առաջադրանքի պահանջներին:

Մրցութային առաջարկները պետք է համապատասխանեն ՀՀ նորմատիվ-իրավական օրենսդրությանը, այդ թվում նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահաջներին:

**Հայեցակարգի նյութերի ձևաչափին ներկայացվող պահանջներ**

- Հայեցակարգին ներկայացվող պահանջներին համապատասխան հիմնական գաղափարի նկարագրություն:
- Սկզբունքային քաղաքաշինական-ճարտարապետական լուծումների նկարագիր:
- Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ:

**Հայեցակարգի կառուցվածք**

Թաղամասի վերակառուցման արդյունքում անհրաժեշտ է՝

- ստեղծել բարենպաստ պայմաններ բնակչության և այցելուների տարբեր խմբերի,ենթակառուցվածքի զարգացման համար,
- կանոնակարգել հանրային տարածքները,
- ձևավորել փողոցային արդյունավետ ցանց՝ միևնույն ժամանակ հնարավորության դեպքում առավելագույնս պահպանելով ձևավորված քաղաքաշինական բանվածքը/հյուսվածքը, բազմազան միջոցառումների կազմակերպման

և անցկացման հնարավորություններ՝ ներգրավելով առավել լայն խմբեր, հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդության տարբեր խմբերի կարիքներին:

**Հանրային տարածքների վերաիմաստավորում**

Հանրային տարածքները հատակագծային կառուցվածքի այն բաղադրիչն են, որտեղ կազմակերպվում է մարդկանց հիմնական կենսական երեք (բնակություն, աշխատանք, հանգիստ) կարիքներից մեկը՝ հանգստի կազմակերպումը: Այստեղ են կազմակերպվում սոցիալական շփումները, ժամանցը, հաղորդակցությունը: Տարածքի արդյունավետ կազմակերպումը հնարավորություն է տալիս տվյալ գործառույթների համար նախատեսված տարածքներում ապահովել բարենպաստ միկրոկլիմայական պայմաններ, հասանելիություն, գեղագիտական ընկալում: Միջավայրի վերակառուցման նախագծով նախատեսվում է ստեղծել թեմատիկ առումով փոխկապակցված բաց հանրային տարածքներ՝ վերջիններիս ավանդական և նոր հաղորդվող գործառույթների կազմակերպմամբ: Դրանք պետք է լինեն մեքենաների մուտքից ազատ՝ տրանսպորտի այլընտրանքային միջոցների օգտագործմամբ և մատչելի բնակչության սակավաշարժ և հաշմանդամություն ունեցող խմբերին: Միևնույն ժամանակ ապահովեն նաև արտակարգ իրավիճակներում բնակչության անվտանգ տարահանումը կազմակերպելու համար մեքենաների մոտեցում:

Հանրային տարածքները պետք է ծառայեն տեղաբնակների (տարբեր տարիքային խմբերի ժամանցի կազմակերպման) կյանքի առօրյա պահանջներին, նաև նոր վերագրվող գործառույթներն օգտագործողների ժամանակակից պահանջներին

**Թաղամասի քաղաքաշինական բանվածքի վերակազմավորում՝ գործառույթների ընդլայնմամբ**

Թաղամասում կյանքի աշխուժացման, օրվա տարբեր ժամերին տարածքների հավասարազոր գործառությունն ապահովելու, տարբեր գործառույթների վերագրմամբ տարածքների անվտանգ օգտագործման նպատակով և այցելությունները երկարաձգելուն միտված՝ առաջարկվում է հայեցակարգային էսքիզ-նախագծում ներառել հետևյալ հանձնարարելի գործառույթներների տարածքային և ծավալատարածական կազմակերպումը՝ յուրաքանչյուր դեպքում ապահովելով բնակչության բոլոր խմբերի (սակավաշարժ, հաշմանդամություն ունեցող) համար մատչելիության հավասարազոր պայմաններ.

- Դեպի թաղամաս բոլոր մուտքերի հասանելիության և գրավչության կազմակերպում (մուտքային հանգույցից հորինվածքի աստիճանական զարգացում մինչև հորինվածքային կիզակետ):
- Թաղամասի ներսում տեղեկատվական յուրահատուկ միջոցով հաղորդակցությունն առավել դյուրին դարձնելուն միտված համակարգի մշակում:
- Մասնագիտացված արհեստանոցներ (արվեստի գործիչների, ճարտարապետների և այլն) բացօթյա և փակ:
- Այցելուների տեղեկատվական կենտրոն:

- Արհեստանոցներ/արվեստանոցներ (ավանդական, ժամանակակից)՝ աշխատանքների արդյունքների ցուցադրության/վաճառքների կազմակերպմամբ:
- Աշխատավայրերի համար սարքավորված տարածքներ (ստեղծարար տեխնոլոգիաներ, գրասենյակներ և այլն) (Coworking space):
- Մեդիա կենտրոն:
- Հուշանվերների վաճառքի և ցուցադրության սրահներ:
- Գիտաժողովների կազմակերպման սրահ՝ քաղաքի պատմության մասին տեսաֆիլմերի ցուցադրությամբ և մասնագիտացված գրականության վաճառքով:
- Միջոցառումների անցկացման բացօթյա/փակ տարածքներ՝ երիտասարդ արվեստագետների աշխատանքների (ներկայացումների, ֆիլմերի, լուսանկարչական աշխատանքների, կրթության, լեզուների, ազգային երգի պարի ուսուցման և մրցույթների կազմակերպման, նկարչական մրցույթների կազմակերպման և այլն) սահմանափակ դիտորդների համար ցուցադրությամբ:
- Սթրիթ արթի-մրցույթների կազմակերպման տարածքներ:
- Բացօթյա վաճառասրահներ:
- Հյուրատներ, սննդի հաստատություններ, հանրային սանհանգույցներ (հաշվի առնելով բնակչության սակավաշարժ և հաշմանդամություն ունեցող խմբերի կարիքները):
- Այցելուների համար ժամանակավոր կացարաններ:
- Դրված նպատակի առավել լիարժեք իրագործմանը նպաստող և հայեցակարգի հիմնական գաղափարին չհակասող ցանկացած այլ գործառույթներ:
  - Թաղամասի ներսում բնակչության սակավաշարժ և հաշմանդամություն ունեցող խմբերի ինչպես նաև լեզվական չիմացությամբ այցելուների համար տեղաշարժը մատչելի և անարգել կազմակերպելուն միտված, առանց լրացուցիչ օգնության կողմնորոշումը դյուրինացնելու նպատակով տարածքում ինֆոգրաֆիկսի կիրառում:

**Հայեցակարգի իրականացման կառավարման պլան/բնակչության տարաբնակեցում**

- Հայեցակարգի իրականացման գործընթացում ներկայացնել բնակչության տարբեր հատվածների վերաբնակեցման խնդիրներին առնչվող առաջարկներ.
- Տեղում բնակիչների վերաբնակեցում (ժամանակավոր կացարանի տրամադրում քաղաքաշինական միջավայրի վերակենդանացման ժամանակահատվածի ընթացքում),
- Բնակիչներին նոր բնակարանների հատկացում այլ վայրում,
- Բնակարանների դիմաց փոխհատուցման տրամադրում:

**Իրագործելություն**

Երևանի Կոնդ թաղամասի պատմաքաղաքաշինական միջավայրի զարգացման, վերակենդանացման, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման նպատակով հայեցակարգային էսքիզ-նախագծի ճարտարապետաքաղաքաշինական առաջարկը պետք է իր մեջ ներառի.

- տնտեսական իրագործելիության հաշվարկ-հիմնավորում, լինի տնտեսապես հիմնավորված և իրագործելի,

- սոցիալական տեսանկյունից լուծի բնակիչների բնակարանային ապահովության խնդիրները (վերը նշված տարբերակներից որևէ մեկով),
- իրենից ներկայացնի ներդրումային հետաքրքրություն առաջացնող ծրագիր:

**Ակնկալվող արդյունքը**

Ակնկալվում է ստանալ ճարտարապետական այնպիսի լուծումներ, որոնք հնարավորություն կտան Կոնդին պահպանելու ձևավորված ուրույն քաղաքաշինական միջավայրի ինքնությունը՝ սոցիալական, քաղաքային և մշակութային հաղորդակցության կենտրոն ծառայելով հասարակության տարբեր շերտերի՝ տեղաբնակների, տեղացիների և այցելուների համար: Հետևաբար, լավագույն հայեցակարգային, քաղաքաշինական և պատմաճարտարապետական լուծումները պետք է հավասարապես անդրադառնան վերականգնման, նորոգման, վերակառուցման, արդիականացման, ամրակայման և՛ արտաքին, և՛ ներքին լուծումներին: Մասնակիցների կողմից ակնկալվում է նաև ստանալ մասնագիտական այլընտրանքային լուծումների տարբերակներ, որոնք կառաջադրեն ոճականորեն բազմազան և միաժամանակ միմյանց ներդաշնակ ու համահունչ լուծումներ ծավալատարածական, ոճական, մասշտաբային, էկոլոգիական և այլ խնդիրների համար:

Գնահատել շարժունակության ֆունկցիոնալ կազմակերպման առաջնահերթությունը՝ կանոնակարգելով այցելուների մեծ և փոքր խմբերի հոսքերն ու կարիքները, որպեսզի հնարավոր լինի ձևավորել շարժունակության անվտանգ, հարմարավետ և ապահով համակարգ՝ առավելագույնս պարզ և փոխկապակցված սխեմայով ուղղորդելով այցելուների հոսքերը:

Քաղաքի համեմատաբար փոքր հատվածի վրա պատմական մեծաթիվ շերտերի կենտրոնացումը պետք է թաղամասը դարձնի այնպիսի մի վայր, որտեղ ցանկացած տարածք և մակերես կարող է և պետք է ծառայի թե՛ այդ բազմազանությանը մարդկանց հաղորդակից դարձնելու, թե՛ ժամանցի կազմակերպման գործին: Շարժունակության կազմակերպման հարցում հատուկ ուշադրություն պետք է դարձվի միջավայրի ընկալման գաղափարական առավել լիարժեք հանգուցալուծմանը՝ ապահովելով հնարավոր բոլոր մուտքերից մարդկանց հավանական հոսքերի կազմակեպված ու նպատակային ուղղորդումը:

Արդիականացման գործընթացում մեծապես կարևորվում է պատմականորեն ձևավորված կերպարի պահպանումը, որը պետք է ի կատար ածվի ժամանակակից քաղաքում քաղաքային միջավայրի սեփական ինքնությունը պատմականորեն պահպանած այս հատվածի ուրույն դիմագիծը հստակ սահմանելու միջոցով:

**Կառուցապատման ուրբանիստական դրույթները**

- թամանյանական ժամանակվանից ի վեր գոյություն ունի Կոնդի ուրբանիզացման՝ քանդման ՝ նորովի կառուցապատման խնդիրը,
- 1980-ականների կեսերին առաջ եկավ Կոնդի արժեքավորման և պահպանման հարցը, սակայն նախագիծ, ուր ներկայացվեցին պահպանման և զարգացման իրական լուծումները՝ չարվեց,

- վերջին երեք տասնամյակների ընթացքում որևէ նոր գաղափար առաջ չի քաշվել: Երրորդ Հանրապետության գործելակերպին հարազատ՝ կրկին նպատակային է դարձել քանդել եղած պատմական շերտերը և փոխարենը՝ կառուցել բարձրահարկ շինություններ,
- այդ ծրագրին համապատասխան իրականացվում է նախկին «Դվին» հյուրանոցի վերակառուցումը,
- միաժամանակ գոյություն ունի արդի միջազգային փորձին համապատասխան այլընտրանքային հայեցակետը, ըստ որի՝ Կոնդի մեզ հասած միջավայրը արժեքավոր է և պահպանման արժանի,
- խնդրի հիմնական հարցադրումը այն է, թե ինչը՞ պահպանել, ինչպե՞ս պահպանել և ինչպե՞ս արդիականացնել եղած միջավայրը,
- կարևոր խնդիրներիցի մեկը՝ սեփականության և սեփականատերեր իրավունքների պահպանման հարցն է, քանի որ բնակչության մի մասը ձգտում է շարունակել բնակվել Կոնդում, մյուսը՝ հեռանալ Կոնդից,
- ընդունելով Կոնդի պահպանման ծրագիրը իբրև գերակա շահ՝ անհրաժեշտ է ուսումնասիրել և գտնել պահպանման ենթակա միջավայրային կառույցներն ու առանձին շինությունները,
- միջավայրի ու առանձին շինությունների հանդեպ կիրառել պահպանման և վերականգնման արդի գիտական մեթոդական սկզբունքները, այդ թվում՝ ներկայացված Ռուսաստանի ժամանակակից ուրբանիստներ Անդրեյ Իվանովի և Նարինե Տյուտչևայի աշխատություններում:

**Խնդիրները**

Հետազոտել թեման, վերլուծել, տրամադրել զարգացման վեկտոր, բացահայտել թաքնված ներուժը, առաջարկել այն մեթոդներն ու նպատակները, որոնք արդիական են ժամանակակից քաղաքի պատմական միջավայրի համար:

- Տարածքն առավել ճանաչելի և գրավիչ դարձնել բնակիչների, հյուրերի և ներդրողների համար, քանի որ, եթե պայմանականորեն քաղաքն ի վիճակի չէ տպավորել իր սպառողներին, ապա այն կորցնում է բիզնեսի համար իր գրավչությունը: Եթե տարածաշրջանը, շրջանը, քաղաքը, տարածքային միավորը չունի ինքնուրույն ռազմավարություն, ապա այն պարտություն է կրում առավել ագրեսիվ դարձող համաշխարհային շուկայում:
- Հետազոտել, վերլուծել և առաջարկել տարածքների զարգացման արդյունավետ գործիքներ, որոնցից են՝ լեզուն (այդ թվում՝ տեղական բարբառը, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվի և արտասանության առանձնահատկությունները), տեղական դիցաբանությունը, առասպելակերտումը, պատմական հիշողությունը, տեղեկատվական յուրահատուկ միջոցները, հաղորդակցության ձևերը, անհատական շփմանավանդույթները, հոգևոր-կրոնական ռեսուրսները (տեղական եկեղեցական համայնքները, կրոնական տոները նշելու ավանդույթները), գործարարության զուտ տեղական առանձնահատկությունները, ընտանեկան,

բարեկամական, դաստիարակչական, կրթական, սպորտային ավանդույթները, տեղական խոհանոցը, միջավայրի կոլորիտը, ավանդական արհեստները, քաղաքացիական ակտիվության, հանգստի և ժամանցի ձևերն ու միջոցները, անեկդոտները, պատմությունները, տեղական տոները, ժողովրդական բանահյուսությունը և այլն:

- Գույքագրել թաղամասում առկա շենքերի/շինությունների մշակութային արժեք ներկայացնող դրվագները և կառուցվածքային տարրերը (հին դռներ, պատուհաններ, պատշգամբներ, կողպեքներ, թակիչներ, ճաղավանդաներ և այլն), հետագայում դրանք ճարտարապետական և դիզայներական լուծումներում կիրառելու պայմանով): ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ սերտորեն համագործակցել թաղամասի ազգագրական, բանահյուսական նյութը գրի առնելու համար:
- Հիմք ընդունելով կայուն զարգացման սկզբունքները, մշակել արդի և ռացիոնալ ճարտարապետական և քաղաքաշինական լուծումներ, որոնք համայնքը գրավիչ կդարձնեն իր բնակիչների, զբոսաշրջիկների և ներդրողների համար:
- Հաշվի առնել կայուն (կամ կառուցվածքային) գործոնները, ինչպիսիք են տեղանքը, կլիման և պատմությունը:
- Հաշվի առնել փոփոխական գործոնները (որոնք փոփոխվում են երկարաժամկետ հեռանկարում), ինչպիսիք են համայնքի չափերը և մարդաշատությունը, արտաքին տեսքը, բնակիչների բարեկեցությունը, տեղական համայնքի մշակութային ավանդույթները:
- Հաշվի առնել խորհրդանշական գործոնները, այն է՝ քաղաքային խորհրդանիշեր, քաղաքական միջավայր, բնակիչների վարքի մշակութային կոդեր, նշանակալի իրադարձություններ, նշանավոր անձինք, որոշակի ապրանքների և ծառայությունների պահանջարկը, համայնքի ներսում հաղորդակցվելու բնույթը և այլ բաղադրիչներ:
- Ամբողջությամբ պահպանել և վերականգնել ինչպես հուշարձանների պետական ցուցակում գրանցված, այնպես էլ նորահայտ հուշարձանի կարգավիճակ ունեցող շենքերը (ցանկը կցվում է)՝ դրանց առնչվող բոլոր նախագծերը աշխատանքային բոլոր փուլերում համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ:
- Հնարավորինս պահպանել ներկա փողոցների ցանցը, գոտիավորել Կոնդը առանձին ենթաթաղերով՝ յուրաքանչյուր ենթաթաղի համար սահմանելով հարկայնության թույլատրելի շեմ:
- Կոնդի մի հատվածը բրենդավորել Արշիլ Գորկու անունով:
- Թաղամասի հուշարձան շենքերի նկատմամբ նոր գործառույթներ վերագրելիս կամ դրանց գործառույթների պահպանմամբ վերաօգտագործման առաջարկներ ներկայացնելիս, հաշվի առնել քաղաքաշինական միջավայրի ինքնության պահպանմանը և ժառանգության անխաթարությանը ներկայացվող պահանջների ապահովումը՝ ոլորտի լիազոր մարմնի համաձայնությամբ [1]:

## I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱԿԱՆ

Բոլոր վերլուծական նյութերի համար օգտագործվել են բաց տպագրական գրական աղբյուրները, համացանցը, «Երևաննախագիծ» ի-տում մշակված Երևանի գլխավոր հատակագծի, Երևանի կենտրոնի գոտիավորման և կառուցապատաման, Կոնդի գոտիավորման և կառուցապատաման նախագծերը, այլ հրապարակված նախագծերի և առաջարկների, kond_info@minurban.am-ի նյութերը:




Կոնդը գրավում է քաղաքի կենտրոնի արևմտյան բարձրադիր մասը: Կոնդ անվանումը տրվել է բարձր դիրքի պատճառով: «Կոնդ» բառը հայերենում նշանակում է երկայնաձիգ, կամ բոլորակ բլուր: Պարսից տիրապետության ժամանակ այդ թաղի անունը փոխվել է և կոչվել «թափաբաշ», որը և Կոնդ բառի թարգմանությունն է:

Կոնդ թաղամասի տարածքը

***Նկ.1. Երևանի կենտրոնի գոտևորման նախագիծ, «Երևաննախագիծ», 2006-2007***

ա

այսօր կազմում է մոտ 25 հեկտար (առաջադրված էր ՝16): Սահմաններն անցնում են Պարոնյան, Լեո, Սարյան փողոցներով, Հովհ.Թումանյանի տուն-թանգարանի մոտով, աստիճանով, որ տանում է դեպի Կոմպոզիտորների տուն և Ֆրիկի փողոց, ապա՝ Պռոշյան փողոցով, ներառելով Սուրբ Հովհաննես եկեղեցին:




***Նկ. 2. Գործառական գոտիներ***

Թաղամասը տեղակայված բավականին բարդ ռելյեֆային պայմաններում:Տարածքի զգալի մասը զբաղեցնում են թեք լանջերը: Լանջերի կողմնորոշումը հիմնականում հարավ –արևելյան և հարավ- արևմտյան է: Կան նաև հյուսիսայինկողմնորոժման լանջեր: Հիմնական տարածքի թեքությունները կազմում են 5-10 տոկոս, իսկ առանձին հարավ –արևելյան և հյուսիսային լանջերի թեքությունը հասնում են 20-50 տոկոսի: Տարածքը թույլ կանաչապատում ունի: Ծառապատ են հիմնականում տնամերձ հողամասերի առանձին կտորները:

Հիմնական սնուցող համաքաղաքային նշանակության մայրուղիներն են Կոնդը շոշափող երեք մայրուղիները, այն է՝ Պարոնյանի, Լեոյի և Սարյանի փողոցները: Ներքին շրջանային նշանակության գործառույթներ ունեցող կապ կարելի է համարել Ռուստավելի փողոցը, որի միջոցով կապակցված են գոյություն ունեցող դպրոցը, «Դվին» հյուրանոցը, մզկիթը եկեղեցին և այլ մի քանի Կոնդի համար նշանակալի կառույցներ: կարևորագույն նշանակություն ունի անկանոն պատմականորեն կազմավորված ներքին փողոցային ցանցը, որը հանդիսանում է Կոնդի առավել գրավիչ գործոններից կարևորագույնը:




***Նկ. 3. Տարածքի վերլուծություն ըստ հարկայնության***

Ըստ ֆունկցիոնալ պարունակության թաղամասի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ տարածքի հիմնական մասը գրավում են բնակելի շենքերը, որոնց գերակշիռ զանգվածը մեկ հարկանի անկանոն կառուցապատման տարրեր են, որոնք կազմավորվել են հիմնականում մինչև 20-րդ դարի 40-50-ական թվականները: 70-ական թվերից սկսած այստեղ կառուցվել է նաև մի քանի բազմահարկ բնակելի և հասարակական շենքեր:




***Նկ. 4. Ռելիեֆի վերլուծություն***

Այսօր «հին քաղաք հասկացությունը բավականին տառածված է աշխարհում և կարևոր նշանակություն ունի բնակավայրերի պատմական և գեղարվեստական տեսքի պահապանման համար: Կոնդը իր յուրահատուկ փողոցային ցանցով և պարսկական և ռուսական ժամանակաշրջանի մի շարք հին քարե և աղյուսե տներով և այլ շատ հատկանիշներով կարելի է ասել, որ բոլոր հնավարությունները ունի՝ համապատասխան միջոցառումներից հետո բավարարի «հին քաղաք» գաղափարիհն ներկայացվող պահանջների:




*Նկ. 5. Ճանապարհային ցանցի վերլուծություն*

Այդ առումով հատուկ վերլուծությամբ վեր են հանվել պատմական և միջավայրաստեղծ կարևոր տարրերը, այն է՝ հուշարձանների առկայությունը և դրանց հետ կապված ֆոնային և կոնֆլիկտային միջավայրերը, տարբեր, այդ թվում՝ նաև զբոսաշրջային գործունեության ակտիվ և միջին ակտիվության դիտարժան և հիշարժան գոտիները: Հուշարձանների պետական ցուցակում Կոնդ թաղամասում առկա է 4 հուշարձան ՝ Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի՝ իր ենթահուշարձաններով,




*Նկ. 6. Ժամանակագրական վերլուծություն*

Մամռիի ջրանցք, Թափաբաշի մզկիթ և «Լեռնեցիների պարը» քանդակ): Բացի այդ կան բավականաչափ պատմական շենքեր, կառույցներ, այլ դիտարժան օբյեկտներ, որոնցից մի քանիսը նախկինում ընդգրկված էին տարբեր պետական ցանկերում:

## II. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կոնդը եղել է Երևան քաղաքի ամենահին թաղամասերից մեկը և միաժամանակ հանդիսացել նրա պատմական կորիզը: Այն եղել է Երևանի ամենակենսունակ հատվածը, որը դարերի բովից անցնելով, քաղաքի համար դարձել է մի տեսակ թանգարանային թաղ: Ըստ ռուս հետազոտող Իվան Շոպենի՝ Կոնդի սահմանները հին Երևանի պլանում ավելի ընդարձակ են եղել: Կոնդի կազմի մեջ են մտել Ձորագեղը, Հրազդանի ձորի այգիները և Դալման: Մյուս կողմից Կոնդի սահմանները հասնում էին մինչև Բերդ:



***Նկ.7. Երևանի գլխավոր հատակագիծ 1856թ.***

Կոնդ թաղամասը Երևան քաղաքի 18-րդ դարից պահպանված հնագույն թաղամասերից մեկն է: Կանգուն կառույցներից որոշները թվագրվում են միջին դարերով՝ Սբ. Հովհաննես եկեղեցին (18-րդ դար) ու մասամբ ավերված մզկիթը (17-րդ դար): Թաղամասը գտնվում է քաղաքի վարչական Հանրապետության հրապարակից մոտ 1 կիլոմետր հեռավորությամբ գտնվող բլրի վրա, որը բաժանում է քաղաքի կենտրոնական հատվածը Հրազդանի կիրճից:



***Նկ.8. Պատմական Կոնդի տեսարաններ***

19-րդ դարի սկզբում Երևանի երեք հիմնական թաղամասերից Կոնդը միակն էր, որ բարձունքի վրա էր գտնվում: Ընդ որում, բարձունքին տարածված թաղամասն ունեցել է թե ոռոգման, թե խմելու ջուր: Կոնդեցի Տեր-Գրիգորյանները՝ Գրիգոր քահանան, նրա եղբայրներն ու հորեղբայրները վաճառել են իրենց ժառանգություն հասած տունը, և այդ միջոցներով 1793 թվականին Գետառից խողովակներով քաղաքին մոտ ու մաքուր ջուր

ունեցող հատվածից ջուր բերել մինչև սուրբ Հովհաննես եկեղեցու գավիթը: Եկեղեցու գավիթ հասնող ջրմուղի մաքուր ջրից օգտվել են բոլոր կոնդեցիները:

Կիրճի գլխին, բլրակի վրա ձևավորված Կոնդ թաղամասը հին քաղաքի ամենաբարձր կետում ունեցել է շահավետ դիրք ու բարենպաստ կլիմա: Բարձունքն անկանոն օղակել են նեղլիկ ու խորդուբորդ փողոցները: Բլրի գագաթին մեկ և երկու հարկանի տներ են եղել, ստորոտի հատվածում ապրել են մեծահարուստները: Հետագայում Կոնդի փեշերին գծվել են խորհրդային փողոցները, որտեղ ազնվականների «ապարանքների» փոխարեն կառուցվել են տներ՝ մտավորականների և արվեստագետների համար:

**Ձորագեղը** բռնում է Հրազդան գետի ձախափնյա մասը, այն ձորափեշերը, որոնք ընկած են Հաղթանակի կամրջից դեպի վեր: Ի դեպ, Ձորագեղը նույնպես ունեցել է իր ստորաբաժանումները՝ Վերին կամ Քարափի թաղ, Ստորին կամ Ձորի թաղ և Կարբո թաղ:

**Դալման** հռչակված էր իր ընտիր խաղողով, որի այգիները փռված էին Հրազդանի աջափնյա բարձունքներում:

Հին Երևանի կերպարում ուրույն տեղ է գրավել Բերդը, որի հետ շատ բանով կապված է եղել Կոնդը, կառուցվել է տասնվեցերորդ դարի վերջերին: Բերդը եղել է Երևանի Սարդարի աթոռանիստը: Բերդն ինքնին մի փոքր քաղաք է եղել և ունեցել է իր բնակչությունը: Կոնդեցիները Բերդում միայն խանութներ են ունեցել: Երբ աշխատանքը Բերդում ավարտվում էր, նրանք պարտավոր էին թողնել բերդը:

Ժամանակի ընթացքում Երևանն ընդարձակվեց, նրա հետ նաև Կոնդը, որը տարածվեց ցածրադիր մասերում:

Հիմնվելով ժամանակագիրների վկայությունների, ինչպես նաև մինչև մեր օրերը հասած հնագիտական և քարակերտ վկայությունների վրա, կարելի է անել հետևություն, որ Կոնդը հնագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Ըստ էության, այժմյան Կոնդի տարածքում առկա են Երևանի զարգացման առնվազն 3 պատմական շրջանների հնագիտական նյութ: Հանդիսանալով Երևանի կենտրոնի հիմնական անառիկ բարձունքը, Կոնդը դարերն ի վեր հանդիսացել է քաղաքի կենտրոնական մասի բնակչության պատսպարվելու միակ հանգրվանը:

5-6-րդ դարերում, Հայաստանը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանվելու ժամանակ, Կոնդը եղել է Բյուզանդական Հայաստանի վերջին ամրակետը Հրազդան գետի և այժմյան Երևանի հարթավայրային մասում:

Կան հիմնավոր կասկածներ, որ անառիկ այս բլուրը պաշտպանական նկատառումներով օգտագործվել է շատ ավելի վաղ, քան Բյուզանդական շրջանում: Մասնագիտական խորհրդակցությունների արդյունքում ի հայտ եկած մի շարք հանգամանքներ թույլ են տալիս ենթադրել շատ ավելի վաղ շրջանի պատմական շերտերի առկայության հնարավորությունը:

Կոնդում պահպանված հնություններից աչքի է ընկնում ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որը շատ հին հուշարձան է, ավերվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ, բայց 1710 թվականին վերականգնվել է:

## III. ԿՈՆԴԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԻՆ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Երևան քաղաքի շրջագիծը, Ռուսաստանին միացման նախօրյակին կազմում էր երեսուն կիլոմետր, սկսած Զանգվի (Հրազդան) կամուրջից և վերադարձած նույն տեղը: Այս տարածության հիմնական մասը զբաղեցնում էին այգիները: Քաղաքը բաժանվում էր երեք գլխավոր մասի (մահլաների): Դրանք կրում էին Կոնդ, Բուն քաղաք և Քարահանք անունները: Պարսից տիրապետության ժամանակ Բուն քաղաքը ստացավ Շահար անվանումը, իսկ Քարահանքը՝ Դամըռ–Բուլաղ: Առանձին էր շուկան, որը ընկած էր Կոնդի և Շահարի միջև: Շուկայից ոչ հեռու գտնվում է Երևանի նշանավոր իջևաններից մեկը՝ Գյուրջի քարվանսարան: Այդ նույն ժամանակ Երևանը ուներ տասներկու հազար բնակչություն, որի կեսից ավելին հայեր էին: Այդ ժամանակ Երևանում կար 1730 տնտեսություն, որոնք տեղաբաշխված էին հետևյալ կերպ՝ 792–ը գտնվում էր Բուն քաղաքում կամ Շահարում, 622-ը՝ Կոնդում, իսկ 322-ը՝ Քարահանքում կամ Դամըռ–Բուլաղում:



***Նկ.9. Երևանի հատակագիծ 1808 թ***

***<u>Բուն քաղաք կամ շահար</u>*** Շահար փարսերենից փոխառյալ բառ է, որն ունի քաղաքի իմաստ: Ընդհանրապես քաղաքների վաճառաշահ մասերը, մյուս մասերից տարբերելու համար տրվել են «քաղաք» կամ շահար անունը: Դա Երևանի այն հատվածն էր, ուր այժմ գտնվում է «Մոսկվա» կինոթատրոնը և նրա շուրջը եղած տարածությունները: Քանի որ Երևանը երկար ժամանակ պարսկական տիրապետության տակ մնաց, ուստի նրա կենտրոնն էլ Շահար կոչեցին:

Հետագայում, Երևան քաղաքի հատակագծման հետևանքով, Շահարի հիմնական մասը բաժին ընկավ Աստաֆևսկայա (ներկայումս Աբովյան) փողոցին և «շահար» անունն էլ ժամանակի ընթացքում մոռացության տրվեց:

***<u>Քարահանքի թաղ կամ դամըռ – բուլաղ</u>*** Այս թաղը բռնել է քաղաքի հարավ-արևելյան մասը: Ժամանակին հայերը դա անվանել են Քարահանքի թաղ: Անունն ինքը ցույց է տալիս, որ այստեղ եղել է քաղաքի քարահանքը: Ինչպես շատ թաղերի անունները, այնպես էլ Քարահանքի թաղի անունը պարսից տիրապետության օրոք՝ փոխվեց և կոչվեց

«Դամբռ–Բուլաղ», որը բառացի նշանակում է «երկաթ-աղբյուր»: Այդպես է կոչվել հատկայպես քաղաքի այդ մասում եղած աղբյուրի ջրերի՝ երկաթի բաղադրություն պարունակելու պատճառով: Դամբռ-Բուլաղը հայտնի էր իր այգիներով: Ի դեպ, Երևանը հին ժամանակներից շրջապատված է եղել բազմաթիվ այգիներով, որոնք առանձին խմբերով գլանվելով այս կամ այն թաղի մոտ՝ կոչվել են նույն թաղերի անուններով: Ինչպես օրինակ Կոնդի, Դալմայի, Դամբռ-Բուլաղի այգիներ. Սարդարի բաղ և այլն: Այգիների գոյությունը պայմանավորված էր բնական բարենպաստ պայմաններով՝ ջերմություն, հող և ջուր:

***<u>Դավա–յաթաղ</u>*** Ինչպես հայտնի է, Երևանը գտնվել է քարավանային ճանապարհների հատման կետում: Նրա վրայով է անցել Իրանը Անդրկովկասի հետ կապող տրանզիտային ուղին: Հետագայում այդ ճանապարհով անցնող քարավաններից Երևանի խանը գանձում էր համապատասխան գումար, որի պատճառով էլ ճամփան ստացավ «Խան-յոլի» (Խանի ճամփա) անվանումը: Ուղտերով Երևան են բերվել շատ բարիքներ, որովհետև այդ ժամանակ բեռնափոխությունները մեծ մասամբ կատարվել են ուղտերով:

Քարավանների բերած բարիքները քաղաքի գործարար մասին հանձնելուց և նորը ստանալուց հետո, քարավանատերերը գերադասում են գնալ ծայրամաս, ուր և՛ հով է եղել, և իջևանները մատչելի: Այդ վայրը քաղաքի այժմյան Սարի–թաղին հարող և Նար-Դոսի փողոցից այն կողմը ընկած բարձրադիր հատվածն է: «Դավա-Յաթաղ» բառը եթե հայերեն թարգմանենք՝ կլինի «ուղտերի ննջարան» նաև «ուղտերի կացարան»:

***<u>Շիլաչի</u>*** Երևանի աշխարհագրական անուններում արտացոլված են նաև նրա առանձին մասերի տնտեսության բնույթը, բնակիչների արհեստն ու զբաղմունքը: Այդպիսիներից մեկի՝ Շիլաչիի անունը մեզ հիշեցնում է այդ թաղի արտադրության բնույթը, հին արհեստավորական Երևանը:

Ինչպես հայտնի է, այն ժամանակ գործարան և գործարանային արդյունաբերություն, ներկա իմաստով, չի եղել: Եղել են առանձին արհեստավորներ, կամ նման տիպի ավելի մեծ ձեռնարկություններ՝ կաշեգործներ, կավագործներ, պղնձագործներ, ներկարարներ և այլ արհեստավորներ: Դրանցից յուրաքանչյուրը ունեցել է իր շարքը, իր տեղը և իր անվանումը քաղաքի գործարար մասում: Առանձին է եղել նաև շոր ներկողների թաղը: Ի դեպ, եղել են երկու տեսակ ներկարարներ՝ «բոյախչի» և «շիլաչի»: Շիլաչի ասելով նկատի են ունեցել արհեստավորների այն շարքը, որտեղ գտնվել են կարմիր գույնով ներկող ներկարարները:

***<u>Ղանթար</u>*** Ժամանակի ընթացքում քաղաքի ամենաաշխույժ և գործարար մասը ստացավ «Ղանթար» անունը: Նրա տեղում ներկայումս գտնվում է Կիրովի անվան մանկական զբոսայգին:

Ղանթար բառը արաբերեն է, որ նշանակում է «շուկայի մեծ կշեռք»: Այդ շուկայում է եղել Երևան քաղաքի ամենամեծ կշեռքը՝ ղանթարը, որը պատկանում էր քաղաքի վարչությանը: Քաղաքի մեծածախ առևտուրը կատարվում էր «ղանթարով»: Նրա տիրոջն էր պատկանում կշռելու մենաշնորհը, իհարկե ապրանքատիրոջից գանձելով համապատասխան գումար:

Հետագայում Ղանթարի գտնված վայրում կառուցվեց ծածկած շուկա, ժողովուրդը այդ շուկային նույնպես Ղանթար կոչեց: Իսկ երբեմն էլ կոչում էին ուղղակի «Ղանթարի տակ»: Երբ, 1906 թվականին Երևանում անցկացվեց ձիաքարշ (կոնկա), ապա Ղանթարը դարձավ նրա կենտրոնը: Այստեղից մի գիծ գնում էր դեպի կայարան, իսկ մյուսը՝ Պլանի գլուխ:Այսօր Ղանթարից մնացել է անունը և մակետը, որը գտնվում է Երևան քաղաքի պատմության թանգարանում:



*Նկ.10. Ղանթար թաղամասի տեսքը*

***Բուլվար*** Երևանում «բուլվար» էր կոչվում քաղաքի կենտրոնական զբոսայգին, որը մի ընդարձակ ծառուղի էր :Բուլվարը սկսում էր այսօրվա Հանրապետության հրապարակից, այնտեղից, ուր նախկինում բարձրանում էր Լենինի արձանը: Այստեղ էր գտնվում նաև քաղաքի «Ֆանտազիա» (հետագայում պրոլետար) կինոթատրոնը, որը տեղադրված էր քաղաքային վարչության հին շենքում: Շենքի գլխին էր գտնվում քաղաքի ժամացույցը: Բուլվարի հարավային ծայրում գտնվում էր ռուսական եկեղեցին, ուր այժմ կանգնեցված է Ստեփան Շահումյանի հուշարձանը:

***Կոնդ*** Կոնդը զրավում է քաղաքի արևմտյան բարձրադիր մասը: Կոնդ անվանումը նրան տրվել է բարձր դիրքի պատճառով: Պարսից տիրապետության ժամանակ այդ թաղի անունը փոխվել է և կոչվել «թափաբաշ», որը և Կոնդ բառի թարգմանությունն է: Կոնդը եղել է մեր քաղաքի ոչ միայն ամենահին, այլև հայաբնակ թաղամասերից մեկը. միաժամանակ հանդիսացել նրա պատմական կորիզը: Նա եղել է Երևանի ամենակենսունակ հատվածը, որը դարերի բովից անցնելով, քաղաքի համար դարձել է մի տեսակ թանգարանային թաղ: Կոնդի կազմի մեջ են մտել Ձորագեղը, Հրազդանի ձորի այգիները և Դալման: Մյուս կողմից Կոնդի սահմանները հասնում էին մինչև Բերդ: Վարչականորեն այն Կոնդի բաղկացուցիչ մասն էր, որը նույնպես ուներ մի քանի ենթաթաղեր՝ Վերին թաղ, Ծիրանի թաղ և այլն: Կոնդի բնակիչները հիմնականում կաշեգործ-արհեստավորներ էին:

Կոնդի բարձունքին, մեծ երկրաշարժից խոնարհված միջնադարյան եկեղեցու տեղում, 1710 թվականին կառուցվել է Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Երևանի մեծահարուստ Մելիք Աղամալի աջակցությամբ: Եկեղեցին, ուշ միջնադարյան մյուս՝ Պողոս-Պետրոս, Զորավոր Ս. Աստվածածին և Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցիների նման, եռանավ բազիլիկ է: Ուղղանկյուն պարագիծ ունեցող հատակագծում ներգրավված են աղոթասրահն ու արևելյան կողմի ավագ խորանը՝ ավանդատներով հանդերձ: Ճարտարապետ Ռ. Իսրայելյանը 1973 թվականին ներկայացրել եկեղեցու հիմնական վերակառուցման նախագիծը, որն հավանության էր արժանացել, սակայն չի իրականացվել: Տաս տարի անց, հեղինակի որդին՝ ճարտարապետ Ա. Իսրայելյանն իր հոր մտահղացումը իրականացրել է: Աշխատանքային նախագիծը մշակել են հանրապետության վաստակավոր ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը և

ինժեներ-կոնստրուկտոր Ավետիք Թեքնեջյանը: 1980-ական թվականներին բազմափորձ ինժեներ-շինարար Միքայել Հովհաննիսյանի անմիջական ղեկավարությամբ կատարվել է եկեղեցու հիմնական վերակառուցումը: Գմբեթը, արտաքին պատերը երեսպատվել են տուֆով: Մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել եկեղեցու ներսում, ավագ խորանի բեմապատը զարդարվել է գեղաքանդակ հորինվածքներով: Արևմտյան կողմից երգչախմբի համար հավելվել է վերնատուն, հատակը մարմարապատվել, բարեզարդվել տաճարի ներսը: Կառուցվել է եկեղեցու զանգակատունը, իսկ 2000 թվականին՝ եկեղեցուն կից «Հովհաննես Կոզեռն» կրթամշակութային կենտրոնը: Կենտրոնում պարբերաբար կազմակերպվում են անգլերեն լեզվի և համակարգչային դասընթացներ, գործում է սրբապատկերի դպրոցը:

Դվին հյուրանոցի տեղում Աղամալյանների մեծ տունն է եղել, ովքեր 18-րդ դարի Կոնդի ամենահարուստ հայերն էին: Տվյալ Հյուրանոցային համալիրը կառուցվել է 1979 թվականին ՝ ճարտարապետներ Ֆելիքս Հակոբյանի, Աշոտ Ալեքսանյանի և Էդուարդ Սաֆարյանի կողմից: Հարկ է նշել որ հյուրանոցային համալիրը եղել է այդ ժամանակաշրջանի ամենա արդիականցված վայրերից մեկը : Հյուրանոցը առաջին անգամ իր դռները բացել է 1983 թվականին: Լինելով 14 հարկանի շինություն նա իր մեջ ներառում էր ռեստորան, բար, գինետուն և այդ ժամանակի համար արտասովոր լյուքս համարներ: Բոլոր սենյակների ներքին ձևավորումը կատարված էր ֆինական կահույքով: Ներքին բակում տեղադրված էին շատրվաններ նաև «Լեռնային Պար» խմբաքանդակը, որը քանդակված էր պղնձից Տիգրան Արզումանյանի կողմից[2,3,4]:



***Նկ.11. Կոնդի կառուցապատում***

## IV. ԿՈՆԴ ԹԱՂԱՄԱՍԸ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կոնդի տեսքը՝ փողոցների կառուցվածքը, քաղաքային հյուսվածքը, գրեթե անփոփոխ մեզ է հասել 18-րդ դարից: Այն ձևավորվել է առանց ճարտարապետական նախագծերի՝ ժամանակի ընթացքում:

Կոնդ թաղամասը հիշատակվում է վաղ միջնադարյան պատմիչ Սեբեոսի վկայություններում՝ "... բարեշեն՝ մենակերպ կենցաղով, խնձորենիների և ծիրանենիների հրաշալի



***Նկ.12. Կոնդում պատմական պատի տեսարան***

այգիներով, խոխոջուն առվակներով ու սառնորակ խմելու ջրով: Կացարանները, հիմնականում, միահարկ, խուլ պատերով փողոցից մեկուսացված, պատշգամբ ու մառան ունեցող տներ են եղել, սակայն առանձնացել է մյուս թաղամասերից իր ինքնուրույն դիմագծով: Հետագայում, Երևանի առաջին քաղաքաշինական փաստաթղթերում Կոնդն իր կառուցվածքով արդեն նշմարվում է որպես առանձին միավոր: Սկսած 1850-ականներից այն ներառվում է քաղաքային հիմնական կառուցվածքում դառնալով դրա թաղամասերից մեկը:

Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի կողմից մշակված 1924 թվականի Երևանի նոր գլխավոր հատակագծում Կոնդի դարերի ընթացքում ձևավորված կառուցվածքին էական ուշադրության չի դարձվում: Նախագծով առաջարկվում էր բլուրի ռելիեֆը շեշտող սիմետրիկ օղակաձև-շառավղաձև միջին հարկայնությամբ կառուցապատում՝ դրանով իսկ միգուցե փորձ անելով չշեշտել կամ մոռացության մատնել քաղաքի պատմական պարսկական անցյալը՝ այստեղ պահպանված այդ շրջանին հատուկ միջավայրի վերացմամբ:




***Նկ.13. Կոնդ թաղամասի տեսքը վերևից***

Մինչդեռ, Կոնդը այդ ժամանակ դեռևս հարուստ էր աղյուսաշեն սլաքաձև կամարներով բնակելի առանձնատներով, այստեղ էին գտնվող պատմական աղբյուրներում հիշատակվող ինը քաղաքային բաղնիքներից հինգն ու երկու մզկիթները: Մզկիթներից մեկի՝ Թափաբաշի մզկիթի պատերը նգուն էին մինչև 1988թ.-ի երկրաշարժը, իսկ հիմնական ծավալը կանգուն է և այժմ՝ ներքին տարածքը հարմարեցված շահագործվող բնակելի տան պահանջներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող ժամանակահատվածում ևս, Կոնդում նշմարելի փոփոխություններ չեղան: Միևնույն ժամանակ, “պլանի տակ” հասկացության պատճառով երկուսից-երեք սերունդ տեղահանման կամ նոր բնակարաններ ստանալու սպասելիքով խուսափում էին ներդրումներ կատարել իրենց տների ու տարածքների պահպանության ու նորոգման համար: Դա պատճառ հանդիսացավ, որպեսզի պատմական կառուցապատման ընդարձակ



***Նկ.14. Կոնդում պատմական թեյարանի տեսքը***

տարածքները ժամանակի ընթացքում վերածվեն հյուղակներով կառուցապատված ու անբարեկարգ թաղամասերի: Կոնդը դրանցից մեկն էր՝ այն միակ առանձնահատկությամբ, որ բնակիչների համայնքի զգացողությունն այստեղ զարգացած էր անհամեմատ ավելի ուժեղ քան այլ թաղամասերում:

Մայրաքաղաքային կերպարի մասին ձևավորված, պատկերացումներին անհամապատասխան այս թաղամասի վերաիմաստավորման ու վերակառուցման փորձեր ձեռնարկվեցին միայն 70-ականներին: Վերակառուցման առաջին միջոցառումներն տարածվեցին թաղամասի արտաքին եզրով՝ շնորհիվ համեմատաբար հասանելի՝ մեղմ ռելիեֆի ու տրանսպորտային ենթակառուցվածքների մատչելիության: Ի հետևանք դրա, թաղամասի պարագծով տեղադրված կառուցապատման հիմնական մասը վերակազմավորվեց կամ համալրվեցին նոր բազմահարկ շինություններով: Այս շրջանում կառուցվեցին մի քանի բազմահարկեր՝ այդ թվում Դվին 9 հարկանի հյուրանոցը:

1984 թ.-ին հայտարարվեց տարածքի վերակառուցման մրցույթ: Մրցույթի արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչվեց երիտասարդ ճարտարապետ Ա. Աղեկյանի էսքիզային նախագծի առաջարկը: 1986 թ.-ին հանձնարարվեց մշակել մանրամասն նախագիծ: Առաջարկը, որ լայնորեն քննարկվեց իրենից ներկայացնում էր




*Նկ.15ա,բ. Պատմական կոնդի տեսարաններ*

կ

ելի տների ընդհանրացված կերպարով կառուցապատում՝ գոյություն ունեցող ինքնաբուխ ձևավորված փողոցային ցանցի, կանաչ ներբակային տարածությունների ու փողոցի երկայնքով զարգացող հրապարակների պահպանությամբ: Բարեկարգման ենթակա 26 հա տարածքը նախատեսվում էր 6000 բնակչի համար: Նախատեսվում էր տարածքը վերածել առավելապես հասարակական



*Նկ.16 Պատմական աղյուսաշար պատի տեսարան*

գործառույթով՝ հյուրանոցներով, ժամանցի վայրերով կառուցապատված գոտու՝ երևանյան “Մոնմարտրի”: 1988 թ.-ին ստացվեց կառավարության համաձայնությունը՝ նախագծի մեկնարկի համար: Սակայն 1988թ.-ի դեկտեմբերի Սպիտակի երկրաշարժը ստիպեց

ուշադրությունն ու նյութական ամբողջ կարողություններն սևեռել դրա հետևանքների վերացմանը: Կոնդի հարցի լուծումն կրկին անգամ հետաձգվեց՝ թողնելով շարունակ զարգանալու ինքնաբուխ սկզբունքով, ինչպես նախորդող երկու հարուրյամյակներում:

Հետագայում, Հայաստանի անկախության ձեռքբերումն ու անկայուն տնտեսական դրությունն նույնպես չնպաստեցին նախագծի իրականացմանը: Այս ամբողջ ընթացքում միայն աննշան միջամտություններ են արվել տեղական բնակչության կողմից՝ բարելավվելու կեցության պայմանները:

Այսուհանդերձ, Կոնդի պարսկական շրջանի բնակելի տներից 21 անուն, գլխավոր փողոցների երեք ամբողջական հատվածներ, բնակելի տների դարպասներ ու երկու մզկիթներ, մինչ 1999 թվականը, ընդգրկված էին պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկում: Միայն դրանից հետո, հիմնավորելով իբրև վերակառուցման արդյունքում ճարտարապետական արժեքը կորցրած, բոլոր հուշարձանները, բացառությամբ Թափաբաշի մզկիթի (1687 թ.) հանվեցին ցանկից: Ներկայիս ցանկը լրացվել է միայն 1706-1710 թթ. կառուցված ու հետագայում վերակառուցված Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցով՝ չհաշված թաղամասի տակով անցնող Մամռիի ջրանցքի:

2005 թվականինին հաստատված Երևանի գլխավոր հատակագծում բարձրացվեցին քաղաքի կենտրոնի զարգացման խնդիրները մասնագիտական՝ նախագծային հարթակի վրա: կարգավիճակ : Գլխավոր հատակագծի հիման վրա 2007 թ.-ին մշակվեց Երևանի Կենտրոն համայնքի (հիմա՝ վարչական շրջան) գոտևավորման նախագիծը , որտեղ թաղամասի մանրամասն նախագծային առաջարկ ներկայացվեց կրկին Ա. Աղեկյանի կողմից, սակայն բոլորովին այլ մոտեցմամբ: Նախագծային առաջարկը իրենից ներկայացնում էր բլրի ցածր, պարագծային գոտու կառուցապատում բազմահարկերով՝ միջնամասի բարձրադիր հատվածի իբրև կանաչ գոտու օգտագործմամբ: Միակ տեսանելի առնչությունը գոյություն ունեցող հատակագծային կառուցվածքի հետ կանաչ տարածքների անցուղիներն էին՝ պահպանված ներկայիս փողոցային ցանցի ուղղություններով:

Չնայած վերը թվարկված հանգամանքներին, 2009 թ.-ին կազմված Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների պահպանման հիմնավորման փաստաթղթում, տարածքում առկա արժեքավոր միջավայրերն ու 18-րդ դարով թվագրվող աղյուսաշեն մի քանի շենքեր դասվել են ճարտարապետական տեսանկյունից արժեքավորների թվին:

Վերջին տարիներին լրատվամիջոցները անդրադառնում են Կոնդի պահպանության շուրջ գիտակցության բարձրացման խնդիրներին: Այդ շարքից աչքի է ընկնում Ա. Իվանովի հոդվածները: Նա անդրադառնալով Կոնդի պահպանության ու տեղում վերաարժեքվորման խնդրին գրում է, որ «այնտեղ կարելի է շրջել ժամերով՝ վայելելով բնական, ինքնաբուխ հատակագծային հյուսվածքով առանց կորցնելու հատակագծի իրական զգացումը: Ծուռ փողոցներ, ոլորված անցուղիներ, անցումների ճեղքեր՝ եզրափակվող մտերմիկ բակերով, փակուղիներով ու անհարթ փայտյա աստիճաններով: Անհանգիստ լաբիրինթոս, որի ամեն անկյուն լի է մարդկանցով, կյանքով… » [7]:



***Նկ.17. Տարբեր տարիների մրցույթային և նախաածաւին առաօառնննեռ***

Կոնդի քաղաքաշինական միջավայրի ձևավորման հիմնորոշ տարրերն են հանդիսացել վերջին երկու հարյուրամյակների ընթացում բնակեցվածության անընդհատությունն ու հաջորդականությունն ու դրա արդյունքում տարածքի հետ անխզելիությունը, որը և ապահովել է այն արժեքավոր առարկայական, ինչպես նաև ոչ նյութական տարածական միջավայրը: Նման ոչ կանոնակարգված զարգացումների արդյունում ամբողջականացված միջավայրը անչափ գրավիչ է այլընտրանքային զարգացման ծրագրերի համար:

2011 թվականին Ուրբանլաբ Երևան Քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտը նախաձեռնեց Կոնդ թաղամասի վերակենդանացման նախագծի մշակումը՝ Ս.Պետրոսյանի ղեկավարությամբ, որտեղ առաջարկվում էին վերակառուցման ավելի մեղմ էվոլյուցիոն մոտեցումներ, որտեղ հատկապես կարևորվում են նախապես մշակված գործողությունների հաջորդականությունը, որոնք պետք է միտված լինեն առկա իրավիճակի վերլուծությանը՝ դուրս բերելու համար պահպանության ենթակա արժեքավոր տարրերի ու քաղաքաշինական հյուսվածքի կարևորությունը:

Այդ ժամանակաշրջանում առաջադրվեց Կոնդին վերաբերող մի շարք այլ նախագծային, հայեցակարգային, դիպլոմային առաջարկություններ, այդ թվում Կոնդի գոտևորման նախագիծը, որոնք հետագայում պատշաչ արձագանք չունեցան և չիրականացվեին[1,2,3,4,5,6]:

## V. ՌԵԳԵՆԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Կոնդ թաղամասի համալիր վերակառուցման, վերակենդանացման և վերարժևորման հայեցակարգի հիմքում դրվում են հետևյալ սկզբունքային դրույթները.

- Պահպանվում է Կոնդի տարածական և ճարտարապետահատակագծային կառուցվածքի տրամաբանությունը ՝ նեղ փողոցներ, ցացրահարկ քարից կամ աղյուսից ու



*Նկ.18. Կոնդի բանվածքի պահպանում և վերարժևորում*

ֆ
ին բնորոշ միջավայր,

- Հուշարձանների և դիտարժան շենքերի և վայրերի պահպանում և դրանց նշանակության ընդգցում ճարտարապետական գործիկակազմով: Հնարավորին չափով, ցացրահարկ կառուցապատման ձևի և ոգու պահպանման համար մասնակցային և վերնակուլյար ճարտարապետության մոտեցումների ներդրում,
- Պատմական փողոցային ցանցի պահպանում, մայրուղային ցանցի արդիականացմամբ,
- Կենտրոնական տեղերի ընդգծում: Ռուստավելիի փողոցի ամբողջ երկայնքով առաջնահերթ վերակառուցում և ռեվիտալիզացիա, փակ սրահների միջոցով մայթերի տարածքի լայնացում և հետիոտնային շարժման խրախուսում



***Նկ.19. Կենտրոնական տեղերի ծավալատարածական կերպարի վերստեղծում***

## VI. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1) Միասնական զարգացում գաղափարը ենթադրում է բոլոր հատակագծատարածական տարրերի միասնություն և համաստորադասում, ներառելով.

- Զարգացման համալիր ծրագիր, նախագիծ և գոտևորում, որտեղ կմիավորվեն բոլոր առկա հիմնախնդիրների լուծման ուղղությունները, այն է `

- գոյություն ունեցող հուշարձանների և միջավայրի, պատմականության մթնոլորտի պահմանումը, միևնույն ժամանակ արդի կենցաղային և հեռանկարային զարգացման ստանդարտների բավարարումը.

- փողոցային ցանց, կացարանների հասարակական սպասարկման օբյեկտների կազմակերպման բարձր մակարդակ, կանաչապատում,
- մասնակցային ճարտարապետության սկզբունքների ներդրում,
- կայուն զարգացում`

- բնական համակարգերի արժեքի գիտակցում և շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն,
- էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների միրառում,
- էներգաարդյունավետություն:

2) Թաղամասի գրավչության մակարդակի բարձրացում և Կոնդի ոգու պահպանում `




***Նկ.20. Հատակագծային լուծումները կրկնում են գոյություն ունեցող փողոցների և փակուղիների պարագիծը***

- բազմազանության, բազմաֆունկցիոնալություն ապահովում և առավելապես խառը օգտագործման տարածքնորի կազմակերպմամբ, առաջին հարկում գտնվող խանութներով և այլ հասարակական օբյեկտներով շենքերի քանակի ավելացմամբ:
- խանութների, գրասենյակների, անհատական բնակարանային բնակարանների մեկ տեղում համատեղում.
- թաղամասային տարածքների և շենքերի խառը օգտագործում, որտեղ տարբեր տարիքի, մշակույթի, եկամտի մակարդակի, և ռասայի մարդկանց հետ տարբերությունները համընկնում են

- ընդհանուր միջավայրը կարգի բերելիս՝ շենքերի և շինությունների բազմազանություն կենտրոն-գրավիչների (միկրոհյուրանոցներ, սրճարաններ, արհեստանոցներ և այլն/ և զբոսաշրջիկության համար համապատասխան ենթակառուցվածքների կազմակեչպում :

3) Ճարտարապետության և քաղաքաշինության բարձր որակը

- համայնքի տարածքում հասարակական օգտագործման վայրերի տեղադրման ժամանակ մարդկային ճարտարապետական մասշտաբների և գեղեցիկ շրջապատի ստեղխում՝ շեշտը դնելով գեղեցկության, գեղագիտության, քաղաքային միջավայրի հարմարավետության վրա, որոնք սատարում են հումանիստական ոգին
- քաղաքային մասշտաբի և միկրոմիջավայրի պահպանմամբ Կոնդը գրավիչ վայր կդառնա հանրային զբոսաշրջային վայրերի, կիսափակ բնակելի անկլավների, միջանկյալ հետիոտնային տարածքների կամակերպման համար:

4) Հետիոտնային մատչելիություն և կապակցվածություն

- Պատմական փողոցային ցանցի պահպանում՝ ապահեվելով փողոցային ցանցի հիերարխիան. համաքաղային և շրջանային նշանակության փողոցներ, նեղ անցումներ, նրբանցքներ կանաչապատ հետիոտն տարածքներ և փողոցներ,
- նեղ ցածր արագությամբ փողոցներ, թաքնված կայանատեղիներով և ավտոտնակներով հետևի գոտիներում, իսկ հարմարությունների մեծ մասը տանից և աշխատանքից հետիոտնային հասանելիության  հեռավորության վրա է տեղակայվում,
- հետիոտների համար հարմար փողոցները ստեղծվում են շենքերիո մոտիկ և նայում են խանութների ցուցափեղկերին և մուտքերին
- ծառերը տնկվում են փողոցի երկայնքով; ավտոկայանատեղի փողոցում; թաքնված կայանատեղիներ; ավտոտնակներ հետևի գոտիներում;

## VII. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Կոնդի հիմնական կոլորիտը ստեղծում են պատմականորեն պահպանված ծուռտիկ-մուռտիկ նեղ փողոցները, որոնք առաջացել  և ձևաստեղծվել են անկանոն կերպով տարբեր տարիներին կառուցված տներով: Ուստի կարելի պնդել, որ այդ փողոցների ուրվագծերի և ընդհանուր կոնֆիգուրացիայի կազմավորկան հիմնական գործոն է հանդւսացել բնակելի տների պատերը, ինչը և թելադրել է միջավայրի ընդհանուր մթնոլորտը և շարժման տրամաբանությունը:

Հաշվի առնելով այդ նկատառումները, ճարտարապետատարածական կազմակերպման հայեցակարգի կորիզն է կազմում պատմական փողոցների պահպանումը գոյություն ունեցող կոնֆիգուրացիայով, ինչը ենթադրում է փողոցները պարփակող պատերի ուրվագծերի կրկնօրինակումը:

Վերակառուցման և վերարժեվորման հայեցակարգըներառում է հետևյալ հիմնական քայլերը՝

- Վերնակուլյար ճարտարապետություն՝

մոտեցում է, որը բնութագրվում է տեղական նյութերի և գիտելիքների օգտագործմամբ, սովորաբար առանց պրոֆեսիոնալ ճարտարապետների վերահսկողության: Ի տարբերություն մասնագիտական ճարտարապետության, ժողովրդական ճարտարապետական ստեղծագործությունը ոչ թե անհատական է, այլ հավաքական՝ մարմնավորելով սերունդների դարավոր փորձը



Նկ.21 Գոտիավորման ուրվագիծ

Այս մոտեցումը պետք է կիրառվի այն դեպքերում, երբ գործ ունենք ժողովրդական ճարտարապետության եղակի օրինակների հետ, որտեղ բավարար է միայն միջավայրի հարմարեցումը, օրինակ՝ զբոսաշրջության պահանջների և վերակառուցմանը երբթակա են առանձին մոտեցումներ, դռներ պատուհաններ պատեր, առանց հիմնովին փոփոխելու նախօրինակը:



առաջ



հետո

Նկ.22 Վերնակուլյար ճարտարապետության խրախուսում

- Մասնակցային ճարտարապետություն

Մասնակցային մոտեցումը ուղղակիորեն նախագծման գործընթացում տեղի բնակիչներին ներգրավելու գաղափարն է առաջ տանում: Այն սահմանվում է որպես ֆունկցիոնալ գործիքներից մինչև միջավայրի, սոցիալական հաստատությունների և ձեռնարկությունների նախագծման մեջ տարբեր սոցիալական խմբերի անմիջական ներգրավման մոդել»



***Նկ.23. Միջավայրի վերաիմաստավորում բնակիչների մասնակցությամբ***

Այս մոտեցումը պետք է կիրառվի այն դեպքերում, երբ գործ ունենք բնակիչների մի զգալի զանգվածի հետ, որը ցանկանում է անմիջականորեն ներգրավված լինել ակտիվ նախագծման և շինարարության գործընթացի մեջ:

Պահպանելով վերոնշված հայեցակարգի հիմնական սկզբունքները, այն է՝ պահպանելով պատերի եզրագծերի նկարվածքը շահառուներին անմիջականորեն ներգրավել վերակառուցման ընթացակարգերի և գործընթացների իրականացմանը:

- Կլաստերային կառուցապատում՝

սա մոտեցում է, որը ենթադրումմ է բնակելի շենքերի և այլ կառույցների կոմպակտ խմբերի համատեղում կառուցապատման համար նախատեսված հողամասի համեմատաբար փոքր տարածքում, ինչը թույլ է տալիս մեկ այլ տարածք թողնել բնական վիճակին : մոտ և դրանով բարելավել ինչպես մարդկանց կյանքի պայմանները և նրանց առողջությունը, այնպես էլ պատմական և բնական միջավայրը:

Կլաստերային կառոցապատման դեպքում նույնպես պահպանվում է վերոնշված հայեցակարգի հիմնական սկզբունքները, այսինքն կլաստերային խմբերը ստեղծվում են պահպանելով պատմական փողոցնրի կոնֆիգուրացիաները: Այսինքն՝ գոյություն ունեցող պատերի եզրագծերի մեջ տրվում են նոր ժամանակակից հարմարավետ բնակարանների և այլ օբյեկտների հատակագծային լուծումներ: Այս դեպքում Կոնդի կերպարը պահպանելու համար անհրաժեշտ է հարկայնության պահպանումը 1-2-3- ի սահմաններում կիրարելոռ այստեղ տարածվածշինանյութերը ՝քարը աղյուսը փայտը:



***Նկ. 24,25 Կենտրոնական տեղերի աշխուժացում***

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՇՎԱՐԿ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1

| ՏԱՐԱԾՔԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ | | | |
|---|---|---|---|
| | ՑՈՒՑԱՆԻՇԸ | ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ | ՄԱԿԵՐԵՍ |
| | 1 | 2 | 3 |
| 1. | <u>Ընդհանուր տարածքը, այդ թվում՝</u> | հա | **25.5** |
| 2. | Բնակելի կառուցապատման այդ թվում՝ | հա | **12.0** |
| | *Ցածրահարկ* | հա | *9.0* |
| | *Բարձրահարկ* | հա | *4.0* |
| 3. | Հասարակական նշանակության | հա | **2.5** |
| 4. | Խառը կառուցապատման | հա | **4.2** |
| 5. | Ընդհանուր օգտագործման, այդ թվում՝ | հա | **6.8** |
| | *Ճանապարհներ, փողոցներ* | հա | 2.8 |
| | *Կանաչապատ տարածքներ* | հա | 4.0 |

### ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

| ՆԱԽԱԳԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
|---|---|---|---|
| | ՑՈՒՑԱՆԻՇԸ | ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ | ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ |
| | 1 | 2 | 3 |
| | ***<u>Ճանապարհներ, փողոցներ</u>*** | ***կմ*** | ***6.05*** |
| 1. | *Պարոնյան+Լեո+Սարյան* | կմ | **2.25** |
| 2. | *Ռուսթավելի* | կմ | **0.5** |
| 3. | *Ներքին ցանցեր* | կմ | **3.3** |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3

| ԹԱՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ* | | | | |
|---|---|---|---|---|
| Բաժիններ հերթական N | Բաժինների, աշխատանքների բովանդակությունը և ծախսերը | Հաշվարկի հիմնավորում | Չափման միավոր /պայմանական միավոր/ դոլար | Արժեք |
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Բնակելի և հասարակական շենքերի, շինությունների քանդման փոխհատուցում | 10–30 պ.մ- ընդհանուր մակերեսի 1քմ | - | 30.000 |
| 2. | Շենքերի քանդում և ապամոնտաժում (ներառյալ տրանսպորտային ծախսերը և նյութերի արժեքի վերադարձը և այլն) | 350 պ.մ- ընդհանուր մակերեսի 1քմ | - | 350.000 |
| 3. | *Ընդհանուր ցածրահարկ բնակելի ֆոնդում՝ այդ թվում* | 1քմ արժեքը 300-600 /միջինացված արժեք 400/ | - | 36.000.000 |
| 4. | Մասնակցայինում | | - | 6.400.000 |
| 5. | Կլաստերներում | | - | 14.000.000 |
| 6. | Վերնակույյար | | - | 15.600.000 |
| 7. | | | - | |
| 8. | Էներգետիկ տնտեսության օբյեկտներ | ընդհանուր գումարի 3 տոկոս | - | 1,080,000 |
| 9. | Տրանսպորտային տնտեսության օբյեկտներ | ընդհանուր գումարի 3.5 տոկոս | - | 1,260,000 |

| ԱՂՅՈՒՍԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ | | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 10. | Արտաքին ցանցեր (ջրամատակարում, ջրահեռացում, կոյուղի, ջեռուցում) | ընդհանուր գումարի 25 տոկոս | - | 9,000,000 |
| 11. | Բարեկարգման աշխատանքներ, կանաչապատում | /միջինացված արժեք/ | | |
| 12. | Նախագծի հետազոտական բաժին, հեղինակային հսկողության | ընդհանուր գումարի 7 տոկոս | ԱՄՆ դոլլար | 2,520,000 |
| 13. | Պահուստ, չնախատեսված ծախսեր | ընդհանուր գումարի 2 տոկոս | ԱՄՆ դոլլար | 720,000 |
| 14. | ԸՆԴՀԱՆՈՒՐ | | | 53.280.000 |
| 15. | Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) | 20% | | 10.656.000 |
| 16. | Ընդհանուր արժեք | | | 63.936.000 |

*Քանի որ ՀՀ-ում շինարարության գնագոյացման նորմատիվային փաստաթղթեր բացակայում են, տվյալ հաշվարկների համար օգտագործվել են Е. М. Коршунова, Н. А. Малинина, К. В. Малинина "Технико-Экономические Расчеты Строительства И Реконструкции Зданий Различного Назначения (На Стадии Технико-Экономического Обоснования), Санкт-Петербург 2011 ուսումնական ձեռնարկը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4

| ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՑԱԾՐԱՀԱՐԿ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՀԱՇՎԱՐԿ | | |
|---|---|---|
| ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ /մարդ/ | | ՄԱԿԵՐԵՍԸ /քմ/ |
| *Ընդհանուր ցածրահարկ բնակելի ֆոնդում՝ այդ թվում* | 5000 | 51000 |
| Մասնակցայինում | 900 | 16000 |
| Կլաստերներում | 1950 | 35000 |
| Վերնակուլյար | 2150 | 39000 |

# Նախաբան

## Թեմայի արդիականություն

Հայաստանի Հանրապետությունում առկա են բազմաթիվ պատմականորեն ձևավորված կարևոր տարածքներ, որոնք մեզ են հասել իրենց սկզբնական տեսքով, բայց մինչ այժմ ոչ մի տեղ համալիր պատշաճ լուծում չեն ստացել դրանց ծավալատարածական միջավայրի կազմակերպման, վերարժևորման և ժամանակակից պահանջներին համապատասխան պատմամշակութային թաղամասերի ստեղծման հիմնախնդիրները:

Կոնդը Երևան քաղաքի պատմականորեն կազմավորված կենտրոնի տարածքում միակ պահպանված հին թաղամասն է, որը ձևավորվել է դեռևս 16-րդ դարում: Այն արմատական փոփոխություններ չի կրել ավելի քան մեկ դար և մի շարք պատմական նշանակություն ունեցող կարևոր շինություններ այստեղ դեռ պահպանվում են: Ուստի ճարտարապետական մրցույթի և մրցութային թեմայի պահանջների իրականուցումը ժամանակի թելադրանք է, որի հրատապությունը ակնհայտ է:

## Մրցույթի նպատակը ըստ տեխնիկական առաջադրանքի

Նպաստել պատմականորեն ձևավորված և ազգագրական-հնագիտական արժեք ունեցող համայնքի քաղաքաշինական կայուն զարգացման սկզբունքների ինտեգրմանը, տեղի բնակիչների արտագաղթի կանխարգելմանը, նվազագույն

ներդրումներով և միջամտություններով տեղական անշարժ գույքի արժեքի բարձրացմանը, տեղական տնտեսության և զբոսաշրջության ակտիվացմանը, ճարտարապետության, ենթակառուցվածքների և սպասարկման որակի բարձրացմանը և աշխատատեղերի ստեղծմանը՝ որպես առաջնահերթություն դիտարկելով Կոնդի բնակչության շահերը:

Շրջակա միջավայրի վերականգնման/վերականգնման մոդելի մրցույթի փուլի նպատակն է կանխորոշել այդ պատմական միջավայրի պահպանման և զարգացման համար Օպտիմալ ազդեցության մեթոդները, որոնց նպատակը ոչ թե ոչնչացումն է, այլ ազդեցության մեթոդների ուժեղացումը, որոնց թվում ճարտարապետական լուծումներն ու գործողությունները հեռու են առաջին և հիմնականից:

## Մրցույթի տարածքի սահմանները

Երևան քաղաքի «Կոնդ» թաղամասի մրցույթով  առաջադրվող  տարածք՝ մոտ 16.0 հա մակերեսով (սահմանները տրված են ելակետային նյութեր բաժնում):

## Մրցույթի առարկա

Երևան քաղաքի «Կոնդ» թաղամասի քաղաքաշինական միջավայրի վերականգնման/վերակազմակերպման նպատակով քաղաքաշինական հայեցակարգային նախագծի մշակում: Ծրագրի խնդիրներն են՝

1. Կոնդ թաղամասի՝ որպես քաղաքի ամենահին պահպանված թաղամասի յուրահատկության դրսևորումը.
2. Պահպանման կամ վերականգնման ենթակա պատմական միջավայրի արժեքավոր հատվածների, տարրերի, օբյեկտների և այլ որակների հիմնավորում և բացահայտում, վերջիններիս հիման վրա պահպանման կամ վերականգնման արդյունավետ ուղիների առաջադրում.
3. Փոխակերպման և զարգացման նպատակների, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների սահմանում.
4. Շրջանի կայուն երկարաժամկետ զարգացում ենթադրող մեթոդաբանության և կանոնակարգերի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների ձևավորում.
5. Առաջարկվող կանոնակարգերի պատկերում կոնկրետ օրինակների վրա, ներառյալ շենքի, տան սեփականության, թաղամասի մասշտաբները.
6. Տարածքի պահպանման և զարգացման կառավարչական և տնտեսական գործիքների սահմանում.

## Հայեցակարգային նախագծի տեխնիկական առաջադրանքը

Մրցութային նախագծի ներառման տարածքը Կոնդ թաղամասի ձևավորված պատմական քաղաքաշինական կառույցն է, որը նախատեսված է տարածքի վերականգնման-վերակենդանացման, ինքնության պահպանման, հնի և նորի շարունակականության ապահովման և միաժամանակ բնակչության համար առավել հարմարավետ և մատչելի/անարգել միջավայրի ձևավորման նպատակով:

## Հայեցակարգի նախապատրաստման սկզբունքները

Տարբերակումը և բազմազանությունը, զգայական ռեզոնանսը տեղանքի պատմականորեն ձևավորված միջավայրի և բնական լանդշաֆտների հետ: Մրցութային հայեցակարգային նախագծի առաջարկները պետք է հաշվի առնեն թաղամասի մշակութային լանդշաֆտի առանձնահատկությունները, ձևավորեն տեսողական ամբողջականություն բնական լանդշաֆտների և ձևավորված քաղաքաշինական-ճարտարապետական միջավայրի հետ:

Նախագծային լուծումները պետք է հաշվի առնեն ճարտարապետությանը միջամտելու այնպիսի աստիճան, որի դեպքում կպահպանվի իսկական փողոցային համայնապատկերների գեղատեսիլ բնույթը՝ ապահովելով շրջակա միջավայրի ընկալման շարունակականությունն ու ամբողջականությունը: Կարևոր է ուշադրություն դարձնել Արարատի հետ տեսողական կապերի պահպանմանը թաղամասից, թաղամասի տեսողական ընկալումը Սարյան փողոցից և Ծիծեռնակաբերդից: Առաջարկությունները պետք է պարունակեն կանոնակարգեր, որոնք սահմանում են բարձրության, ուրվագծային, ընդհանուր գաբարիտային չափերի բնութագրերը, օգտագործվող նյութերին ներկայացվող պահանջները:

Կանոնակարգերը պետք է վերաբերեն ինչպես կառուցապատմանը, այնպես էլ տարածքի բարեկարգմանը: Ներկայացվող առաջարկները պետք է փոխեն թաղամասի հեղինակությունը դրականի, որն արտացոլում է Կոնդի՝ որպես քաղաքի ամենահին թաղամասի, "հին Երևանի" յուրահատկությունը, որը ներկայացնում է ազգային պատմության, ավանդույթների և մշակույթի հարստությունը: Թաղամասը պետք է լինի բարեկամական բոլոր կատեգորիաների բնակիչների և թաղամասի հյուրերի համար: Նպաստել շրջանի բնակիչների բարիդրացիական կեցվածքի պահպանմանը, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

Թաղամասի և ամբողջ շրջանի շենքերի կանաչապատման համար օպտիմալ տարածքային պլանավորման լուծման մշակում' առկա պատմական ժառանգության պահպանմամբ' հաշվի առնելով տարածքի զարգացման հեռանկարները, դրա գերակշռող ճարտարապետական տեսքն ու ոճը:

Տարածական զարգացման առաջարկները պետք է պահպանեն ձևավորված քաղաքաշինական կառուցվածքը, որը եզակի է, որը սկիզբ է առնում քաղաքի դարավոր պատմությունից և, միևնույն ժամանակ, հաշվի առնի մատչելի, հարմարավետ և անվտանգ միջավայրի, բարեկարգ հասարակական տարածքների ստեղծումը, որոնք բավարարում են ինչպես բնակիչների, այնպես էլ այցելուների պահանջմունքներն ու պահանջները:

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն նաև ծրագրի խոշորացված տեխնիկատնտեսական հաշվարկը, որը հաշվի է առնում համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների և ինժեներական ենթակառուցվածքների վերափոխման ծախսերը, մասնավոր ներդրողների կողմից կառուցապատման պահպանման և զարգացման ծախսերը, համայնքի ապագա գործառնական ծախսերը, ապագա հարկերը, որոնք քաղաքապետարանը կստանա բիզնեսի և անշարժ գույքի զարգացումից:

Անհրաժեշտ է սահմանել շրջանի վերափոխման գործընթացում բոլոր մասնակիցների փոխգործակցության սկզբունքները:

Անհրաժեշտ է ներկայացնել մշակված հայեցակարգի ճարտարապետաքաղաքաշինական մասը, որը պարունակում է սկզբունքային ճարտարապետական լուծումներ, որոնք համակողմանիորեն հաշվի են առնում սոցիալական, տնտեսական, ֆունկցիոնալ, ինժեներական, տեխնիկական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, բնապահպանական, ճարտարապետական, գեղարվեստական և այլ պահանջներ օբյեկտների և տարածքի նկատմամբ, որոնց նախապատրաստման համար անհրաժեշտ է ճարտարապետի մասնակցությունը: Մրցանակի հավակնող նախագիծը պետք է համապատասխանի վերը նշված պահանջներին, առաջարկի Կոնդի եզակի թաղամասի պահպանման և զարգացման լավագույն կառավարչական և տնտեսական ալգորիթմը, ցուցադրի կայուն շինարարության լավագույն որակները, օգտագործի պատմական միջավայրի պահպանման, վերականգնման (ռեգեներացիայի) և հարմարվողական (ադապտիվ) վերաօգտագործման սկզբունքներն ու բուն տարածքի յուրահատուկ բնական առանձնահատկությունները՝ գրավիչ միջավայր ստեղծելով բնակիչների և զբոսաշրջիկների համար: Մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց գաղափարը, թե ինչ է առաջարկում այս վայրը բնակիչներին և հյուրերին և տպավորություն թողնեն այցելուների վրա, որպես իրական Հին քաղաք: Սակայն ոչ թե Քաղաք-թանգարան, այլ կենդանի և զարգացող, պահպանելով իր ավանդույթները և հարգելով իր պատմությունն իր իսկության և ամբողջականության մեջ:

Հաշվի առնելով հայեցակարգի իրականացման արժեքը, որը պայմանավորված է վերջինիս սոցիալական բաղադրիչի առկայությամբ, Կոնդի քաղաքացուն դիտարկել որպես գերակա շահ և մրցութային հայեցակարգում ներկայացնել ծրագրի իրագործելիության հիմնավորումը:

# I. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԳՆԱՀԱԿԱՆ

Բոլոր վերլուծական նյութերի համար օգտագործվել են բաց տպագրական գրական աղբյուրները, համացանցը, «Երևաննախագիծ»ի-տում մշակված Երևանի գլխավոր հատակագծի, Երևանի կենտրոնի գոտիավորման և կառուցապատաման, Կոնդի գոտիավորման և կառուցապատաման նախագծերը, այլ հրապարակված նախագծերի և առաջարկների, kond_info@minurban.am-ի նյութերը:




*Երևանի կենտրոնի գոտևորման նախագիծ, «Երեւաննախագիծ», 2006-2007*

Կոնդը գրավում է քաղաքի կենտրոնի արևմտյան բարձրադիր մասը: Կոնդ անվանումը տրվել է բարձր դիրքի պատճառով: «Կոնդ» բառը հայերենում նշանակում է երկայնաձիգ, կամ բոլորակ բլուր: Պարսից տիրապետության ժամանակ այդ թաղի անունը փոխվել է և կոչվել «թափաբաշ», որը և Կոնդ բառի թարգմանությունն է:

Կոնդ թաղամասի տարածքը այսօր կազմում է մոտ 25 հեկտար: Սահմաններն անցնում են Պարոնյան, Լեո, Սարյան փողոցներով, Հովհ.Թումանյանի տուն-թանգարանի մոտով, աստիճանով, որ տանում է դեպի Կոմպոզիտորների տուն և Ֆրիկի փողոց, ապա՝ Պռոշյան փողոցով, ներառելով Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Թաղամասը տեղակայված բավականին բարդ ռելյեֆային պայմաններում:Տարածքի զգալի մասը զբաղեցնում են թեք լանջերը: Լանջերի կողմնորոշումը հիմնականում հարավ –արևելյան և հարավ- արևմտյան է: Կան նաև հյուսիսայինկողմնորոժման լանջեր: Հիմնական տարածքի թեքությունները կազմում են 5-

10 տոկոս, իսկ առանձին հարավ–արևելյան և հյուսիսային լանջերի թեքությունը հասնում են 20-50 տոկոսի: Տարածքը թույլ կանաչապատում ունի: Ծառապատ են հիմնականում տնամերձ հողամասերի առանձին կտորները:




*Գործառական գոտիներ*

Հիմնական սնուցող համաքաղաքային նշանակության մայրուղիներն են Կոնդը շրջափող երեք մայրուղիները, այն է՝ Պարոնյանի, Լեոյի և Սարյանի փողոցները: Ներքին շրջանային նշանակության գործառույթներ ունեցող կապ կարելի է համարել Ռուստավելի փողոցը, որի մջոցով կապակցված են գոյություն ունեցող դպրոցը, «Դվին» հյուրանոցը,մզկիտը եկեղեցին և այլ մի քանի Կոնդի համար նշանակալի կառույցներ: կարևորագույն նշանակություն ունի անկանոն պատմականորեն կազմավորված ներքին փողոցային ցանցը, որը հանդիսանում է Կոնդի առավել գրավիչ գործոններից կարևորագույնը: Ըստ ֆուկցիոնալ պարունակության թաղամասի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ տարածքի հիմնական մասը գրավում են բնակելի շենքերը, որոնց գերակշիր զանգվածը մեկ հարկանի անկանոն կառուցապատման տարրեր են, որոնք կազմավորվել են հիմնականում մինչև 20-րդ դարի 40-50-ական թվականները: 70-ական թվերից սկսած այստեղ կառուցվել է նաև մի քանի բազմահարկ բնակելի և հասարակական շենքեր:




*Տարածքի վերլուծություն ըստ հարկայնության*




*Ճանապարհային ցանցի վերլուծություն*

Այսօր «հին քաղաք հասկացությունը բավականին տառածված է աշխարհում և կարևոր նշանակություն ունի բնակավայրերի պատմական և գեղարվեստական տեսքի պահապանման համար: Կոնդը իր յուրահատուկ փողոցային ցանցով և պարսկական և ռուսական ժամանակաշրջանի մի շարք հին քարե և աղյուսե տներով և այլ շատ հատկանիշներով կարելի է ասել, որ բոլոր հնավարությունները ունի՝ համապատասխան

միջոցառումներից հետո բավարարի «հին քաղաք» գաղափարիին ներկայացվող պահանջների: Այդ առումով հատուկ վերլուծությամբ վե են հանվել պատմական և միջավայրաստեղծ կարևոր տարրերը, այն է՝ հուշարձանների առկայությունը և դրանց հետ կապված ֆոնային և կոնֆլիկտային միջավայրերը, տարբեր, այդ թվում՝ նաև զբոսաշրջային գործունեության ակտիվ և միջին ակտիվության դիտարժան և հիշարժան գոտիները: Հուշարձանների պետական ցուցակում Կոնդ թաղամասում առկա է 4 հուշարձան ` Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի՝ իր ենթահուշարձաններով, մռիի ջրանցք, Թափաբաշի մզկիթ և «Լեռնեցիների պարը» քանդակ): Բացի այդ կան բավականաչափ պատմական շենքեր, կառույցներ, այլ դիտարժան օբյեկտներ, որոնցից մի քանիսը նախկինում ընդգրկված էին տարբեր պետական ցանկերում:




*Ժամանակագրական վերլուծություն*

# II. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երևանն աշխարհի ամենահին բնակավայրերից մեկն է ։ Հնագետների հավաքած նյութերի համաձայն ՝ մարդն այսօրվա մայրաքաղաքի տարածքում ապրել է ավելի քան 40-80 հազար տարի առաջ ։ Սակայն հարկ է նշել, որ Երևանի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել Շենգավիթ կոչվող տարածքում գտնվող բնակավայրը, որտեղ հետազոտության արդյունքում հայտնաբերվել են առաջին տների և պարիսպների վկայություններ: Առաջին բնակիչներն ապրում էին քարից պատրաստված տներում, հատակները սալիկապատված էին, իսկ տները կառուցված էին աղյուսից ։ Շենգավիթի պեղումների ժամանակ բացվել են տարբեր ժամանակների ճարտարապետական համալիրի չորս շերտեր, ինչպես նաև հայտնաբերվել են քարե և պղնձե գործիքներ:



*Պատմական Կոնդի տեսարաններ*

Երևանի տարածքում Մ.թ. ա. XVII-XIX դդ. բնակելի տարածքներ են հայտնաբերվել Ծիծեռնակաբերդում, Կարմիր ամրոցում, Արին ամրոցում և Կարմիր բլուրում: Բայց քաղաքի պատմության մեջ շրջադարձային պահը Էրեբունի ամրոցի հիմնադրումն էր ։ Արգիշտի Առաջինի թողած արձանագրությունը վկայում է Երևան քաղաքի անվանման մասին, որտեղ "երևալ" - ը հայերենից թարգմանվում է "տեսնել", ինչը հղում է Նոյան տապանի մասին աստվածաշնչյան պատմությանը:

Երևանի տարածքը մեծացավ 1437-1467 թվականներին, երբ դարձավ արատի կառավարման կենտրոնական մասը: 16-րդ դարում Երևանի կառավարման համար մարտեր էին ընթանում թուրք և իրանցի կառավարիչների միջև ։ 1603-1604 թվականներին Շահ Աբասը ինը ամիս պաշտպանել է իր իշխանությունը, սակայն թուրքերի ճնշման տակ նահանջում է ։ Սակայն 1605 թվականին պատերազմող պարսիկների և թուրքերի միջև կնքված պայմանագրի համաձայն Երևանը մնաց Պարսկաստանի տիրապետության տակ ։ 4-րդ դարի ընթացքում Երևան քաղաքը դարձել է տարածքի համար մղվող մարտերի վայր և

միայն 1735 թվականին Պարսկաստանն ամրապնդում է իր դիրքերը և կառավարումն ամբողջությամբ վերցնում իր ձեռքը: Հռչակված "Երևանի կառավարումը" ՝ 45 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, զբաղեցնում էր Մեծ Հայքի տարածքը, Արարատ նահանգը, Արարատյան դաշտը, Շիրակն ու Վանաձորը, Արարատ և Արագած լեռները, Սևանա լիճը, ինչպես նաև Նախիջևանի հովիտը :

1747-1828 թվականներին հռչակվել է "Երևանի խանություն" ՝ կիսաազատ խանություն Նադիր շահի տիրապետության ներքո : Խանությունը զբաղեցնում էր 19,5 հազար քառակուսի կիլոմետր : Երևանն ուներ նաև իր դրոշը, զինանշանը և հպատակները : Այդ ժամանակ Երևանի տիրակալները խաններն էին և, որպես կանոն, նրանք ավելի շատ իրավունքներ ունեին, քան մելիքներն ու Բեկերը, քանի որ նրանք սահմանային հողերի տիրակալներն էին : 18-րդ դարի երկրորդ կեսին Երևանի խանները ձեռք են բերում ինքնավարություն : Հետզհետե թուլանում է շահերի կառավարումը Անդրկովկասի տարածքում, ինչն էլ նպաստում է վրաց իշխանների, հայ մելիքների և թուրք Բեկերի ավելի ամուր դիրքերին : Երևանի խանությունն ուներ 100 խանութ, 8 մզկիթ, 7 եկեղեցի, 10 բաղնիք, 5 հրապարակ, 2 բազար և 2 դպրոց : 1827թ. հոկտեմբերի 1 - ին ռուսական և հայկական զորքերը Իվան Պասկևիչի գլխավորությամբ ազատագրում են Երևանի բերդը ՝ դրանով իսկ հռչակելով Պարսկական կայսրության տիրապետության ավարտը:

## Երևանի հիմնական շրջանները

Երկար ժամանակ, ելնելով ազգային բազմազանությունից, դեռևս 1605 թվականից Երևան քաղաքը գաղտնի բաժանվել է շրջանների, որոնք էլ իրենց հերթին ունեցել են իրենց ճարտարապետական առանձնահատկություններն ու յուրահատկությունը: Ժամանակակից իմաստով փողոցները գոյություն չունեին այնպես, ինչպես տների անունները և համարակալումը: Յուրաքանչյուր թաղամասի անունն ուներ իր կշիռը հասարակության մեջ և ծագումը: Նրանք պատմում են քաղաքի աճի և զարգացման մասին, որտեղ ապրում է անցյալը: Պաշտոնական փաստաթղթերում քաղաքը բաժանվել է 3 մասի (Մահալի) : Դրանք կոչվում էին Կոնդ, բուն քաղաքը (Շաժար) և Քարախանք (Դամիր-Բուլախ) : Բազարը, որը առևտրի կենտրոն էր և գտնվում էր Կոնդ և Շաժար թաղամասերի մեջտեղում, ոչ մի շրջանի չէր ներկայանում և ինքնավար էր: Բազարից ոչ հեռու այդ շրջաններում առևտրականների համար հայտնի կանգառ կար ՝ Գյուրջիի քարավանատունը: Երևանը գտնվում էր Խան-Յոլի Պարսկաստան տանող առևտրական ճանապարհին, և այդ դիրքը քաղաքը դարձնում էր առևտրի Մեծ կենտրոն :

- **Բերդ.**



*Հին Երևանի տեսքը*

Գլխավոր ամրոցը քաղաքում կարևոր դեր է խաղացել այնպես, ինչպես միջնադարյան քաղաքի ցանկացած գլխավոր ամրոց ։ Բայց եվրոպական քաղաքների և Երևանի տարբերությունն այն է, որ ամրոցը չի գտնվել քաղաքի կենտրոնական մասում ։ Երևանյան բերդը կառուցվել է 16-րդ դարում ։ Օվալաձև այս ամրոցը զբաղեցնում էր 7 հեկտար և 4 հազար քայլ տրամագծով ։ Արևմտյան կողմում Երևանի բերդը պաշտպանված էր Քրազդանի ձորակով ։ Այս մասը հողեղեն էր և ծառայում էր Բերդի թնդանոթները տեղավորելու համար ։ Մյուս կողմից, ամրոցը շրջապատված էր 10,5 և 12 մետրանոց երկշերտ ատամնավոր պատերով, որոնք կառուցված էին չայրված աղյուսից կամ պարզապես հողաշերտից ։

Առաջին պարսպապատերը կառուցվել են 1583 թվականին, երկրորդը ՝ 1603 թվականին ։ Երկու պատերը գտնվում էին միմյանցից 37-43 մետր հեռավորության վրա և մոտ 50-60 աշտարակների և բուրգերի մեջ ։ Ամրոցի բարձր ու հաստ պատերը նկարվել են որմնանկարներով, որոնք հարմարեցվել են հրետանու և հրացանների պաշտպանությանը ։ Պատերը շրջապատված էին լայն ու խորը խրամատներով, որոնք հարձակման ժամանակ լցվում էին ջրով ։ Ամրոցի մուտքը կատարվում էր երկու մեծ մետաղական դարպասներով ։ Իր հերթին, յուրաքանչյուր դարպաս հսկվում էր հատուկ պահակների կողմից, որոնցից առաջին խումբը ՝ Բաբ-Շիրվանը, գտնվում էր ամրոցի հյուսիսային մասում, երկրորդ խումբը ՝ Տավրեզ-գափուսը, հարավային մասում ։ Բացի պաշտոնական մուտքից, դարպասի միջով կարելի էր ամրոց մտնել գաղտնի անցուղով, որն իրականացվում էր Դալմայի այգիներով և տանում դեպի Խրասզդան գետը: Սակայն հարկ է նշել, որ Երևան բերդը ոչ միայն պաշտպանության շենք էր, այլև պարիսպներից դուրս մի ամբողջ թաղամաս էր բնակություն հաստատել, որն իր մեջ ներառում էր Խանի կալվածքները, Երկու մզկիթները, Խանի բաղնիքը, զորանոցները, պահեստները, զինանոցները, կրպակները, խանութները, բնակելի շենքերը և մի շարք այլ շինություններ, որոնց թվում էր նաև Սուրբ Գևորգ հայկական եկեղեցին: Ըստ ճանապարհորդ Լուի Շարդենի ստեղծած առաջին քարտեզի ՝ ամրոցում գտնվել է 800 բնակելի տուն ։ Դրանք, մեծ մասամբ,

կառուցվել են փողոցների երկայնքով, որոնք իրենց հերթին կրկնում էին տեղական լանդշաֆտի ձևերը ։ Այս տների մի մասը ծառայում էր Բերդի կարիքների համար, իսկ մի մասը ՝ որպես ուղղակիորեն տներ, որոնք հարձակման ժամանակ վերածվում էին ապաստանի վայրերի ։ Հետագայում սարդարները ամրոցի կառավարումն ամբողջությամբ վերցրեցին իրենց ձեռքը ՝ այնտեղից վտարելով հայերին և պարսիկներին ։



*Հին Երևանի փողոց*

Այսպիսով, 18 - րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին բերդը դադարեց բնակելի թաղամաս լինելուց և վերածվեց Խանի կարիքների թաղամասի ՝ կալվածքով, մզկիթով, հարեմով և կայազորով ։ Ամրոցի ամենագրավիչ կառույցը, իհարկե, Սարդարի (Խանի) ամրոցն էր ։ Այն մի քանի անգամ վերակառուցվել է այս կամ այն Խանի և սամայայի պահանջների համաձայն ։ վերջին վերակառուցումը եղել է 1798 թվականին Խան Մահմուդի օրոք ։ Սարդարի ամրոցը ուղղանկյուն և ընդարձակ կառույց էր, որը բաժանված էր մի քանի մասի ։ Շենքն ամբողջությամբ կատարվել է պարսկական ճարտարապետության ոճով: Ամրոցն ինքնին բաժանված էր երկու մասի ՝ ամրոցի մի մասը և հարեմի մի մասը ։ Հետագայում, Երևանը Ռուսական կայսրության տիրապետության տակ անցնելուց հետո, ամրոցը վերափոխվել է և ծառայել որպես հիվանդանոց ։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայելային ընդունելությունների սրահին (շուշաբանդ-Այվան), որտեղ և գլխավոր Սարդար Երևանն անցկացնում էր իր ժամանակը: Դահլիճը կոչվում էր հայելային, քանի որ քիվերը երեսպատված էին բազմագույն հայելիներով, որոնք արտացոլում էին լույսը տարբեր ուղղություններով ստեղծելով գունային խաղեր: Առաստաղները զարդարված էին ծաղիկներով, մեծ մասամբ ՝ վարդերի և ծիածանաթաղանթի նկարներով, իսկ սրահի պատերին կային ութ նկարներ, որոնք նվիրված էին վերջին Սարդար Հուսեյն Խանին, Ֆաթ-Ալի Շահին և այլոց: Ամրոցի պատուհաններից բացվում էր տեսարան դեպի Հրազդան գետը և հարակից դաշտը, Խանի զբոսայգիները և Արարատ լեռը ։ Ամրոցի դիմաց փռված էին այգիներ, որտեղ աճում էր բացառապես հայկական խաղողի տեսակը, որից էլ պատրաստում էին գինին ։ Այգիները պահպանվել են միայն մինչև 1900-ական թվականները ։

Ամրոցի տարածքում գտնվող բաղնիքները կառուցվել են մարմարից և զարդարված են պարսկական զարդանախշերի մոտիվներով: Բաղնիքում գործում էր լողավազան, որն ամռանը լողի վայր էր : Եվ բաղնիքը, և լողավազանը ավերվել են 1830-ականներին : Խանի ամրոցի մոտ մի քանի քարավաններ կային: Շենքերը քառակուսի վիճակում էին ՝ բաղկացած երեք մեծ և 60 փոքր սենյակներից: Կային նաև մեծ գրիչներ և խանութներ առևտրականների համար : Շենքի դիմաց նստարաններով շրջապատված հրապարակ էր, իսկ մոտակայքում ՝ մեկ մզկիթ և երկու սրճարան :

- **Հին թաղամաս.**



*Շիլաչի թաղամսի տեսքը 1910-ական թվականներին*

Հին թաղամասը քաղաքի ամենամեծ տարածքն է : Շրջանը զբաղեցնում էր քաղաքի կենտրոնական մասը: Նաև ժողովրդականորեն հայտնի է որպես "քաղաք ինքնին"կամ " Շահար": Քանի որ Երևանը երկար ժամանակ գտնվում էր պարսկական կայսրության տիրապետության տակ, Քաղաքի կենտրոնը կոչվում էր Շահար (թարգմանությունը ՝ "կավե քաղաք") : Եվրոպական քաղաքների համար սովորական էր քաղաքի կենտրոնական մասը "Քաղաք"անվանել : Բայց Երևանի համար "Շահար" անունը չի արմատավորվել և թաղամասն ինքնին առևտրային և գործարար կենտրոն չի դարձել :

Հին քաղաքում էր գտնվում քաղաքի եկեղեցիների հիմնական մասը: Շահարում կային կենտրոնական փողոցներ, ինչպիսիք են Աստաֆյանը և բժշկական փողոցը: Այս փողոցների խաչմերուկում էր գտնվում Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին, որը կառուցվել էր Ռուսական կայսրության օրոք և ներկայացնում էր ռուսական եկեղեցական ճարտարապետության օրինակ, սակայն ավերվել էր 1930 թվականին : Աստաֆյան փողոցի արևմտյան մասում գտնվում էր եկեղեցական փողոցը, որը փողոցի վերջնամասում կոչվել է կաթոլիկ եկեղեցու անունով : Այնտեղ էր նաև Գեթսեմանի մատուռը: Մատուռի կողքին գտնվում էր ամենահին թաղման վայրը ՝ եզակի և պատմականորեն կարևոր տապանաքարերով : Այսօր մատուռի տեղում է գտնվում ժամանակակից Երևան քաղաքի մարգարիտը ՝ օպերայի և բալետի թատրոնը:

- **Կոնդ.**



Ղաթար թաղամասի տեսքը

